Azg Ազգ

12 ՅՈՒԼԻՍ 2012 ՀԻՆԳՇԱԲԹԻ 125(4977)

ISSN: 1829-1651

Համանախագահները եկան, Ադրբեջանը զորավարժություններ սկսեց

ՎԱՀԲԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Բաքվի լրատվամիջոցների հաղորդմամբ՝ Ադրբեջանը ծավալուն զորավարժություններ է սկսել «մերձմակաստային գոտում, որոնք կտեւեն մեկ շաբաթ»: Զորավարժությունները անցնում են պաշտպանության նախարար Սաֆար Աբիեւի անմիջական ղեկավարությամբ, ծրագրվում է, որ այդ ընթացքում «կօգտագործվեն արդիական տեխնիկա եւ սպառազինություն»:

Հարցը, որ այս առթիվ հրատապ է, մեկն է՝ ինչ կապ կա զորավարժությունների եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների տարածաշրջանային վերջին այցի, որ դեռեւս չի ավարտվել, միջեւ: Հնարավոր է, Բաքվում այդ զորավարժությունները ծրագրվել էին ավելի վաղ, քան հայտնի էր դարձել, որ համանախագահները կժամանեն Ադրբեջան, ԼՂՀ եւ Հայաստան: Չի բացառված, սակայն, որ «մերձմակաստային գոտում» ուժի ցուցադրումը հետեւանք է միջնորդներից

Ադրբեջանի «խոր հիասթափության», եւ այդ ձեւով պաշտոնական Բաքուն եւս մեկ անգամ ցուցադրում է ոչ կառուցողական վերաբերմունք:

Ըստ երեւույթին, ադրբեջանական կողմը «ուժի ցուցադրություն» է կազմակերպել, որպեսզի ընդգծի, թե «միջնորդության ջանքերը ապարդյուն են»: Բաքվում խիստ անհանգստացած են, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները «խախտում են պարիտետը» եւ չեն ուզում հանդիպել «ԼՂ ադրբեջանական համայնքի ներկայացուցիչների հետ»:

Իրոք, վերջին շրջանում «ԼՂ ադրբեջանական համայնքի ներկայացուցիչները» չեն արժանանում Ադրբեջան այցելող պաշտոնյաների ուշադրությանը:

Դա, ինչ խոսք, ադրբեջանական կողմի ընկալմամբ, «անարդարություն է»: Պաշտոնական քարոզչությունը, թերեւս սպառած լինելով ինքնորոշման իրավունքի դեմ բոլոր «հակափաստարկները», սկսել է շրջանառել գաղափար, որ, «այո՛, Լեռնային Ղարաբաղի բնակչությունը կարող է ինքնորոշվել, բայց արդյունքները պետք է նկատի առնվեն առանձին-առանձին»: *Տես էջ 3*

Դոլարի թանկացման ժամանակահատվածն ավարտվեց

Դրամի արժեւորման միտումը ամռանը հավանաբար կպահպանվի

«Նասդաք ՕԷՄԷՔՍ Արմենիա» բորսայում երեկ դոլարի միջին փոխարժեքը կազմել է 413,3 դրամ, իսկ փակման գինը՝ 413 դրամ: Վաճառվել էր 4,5 մլն դոլար: Գրեթե նույնքան դոլար էր վաճառվել նախորդ օրը, իսկ փոխարժեքը կազմել էր մոտ 415 դրամ: Այս ցուցանիշները փաստում են, որ մոտ 1,5 ամիս առաջ սկսված դոլարի թանկացման ժամանակահատվածն ավարտվեց: Հիշեցնենք, որ մայիսից 1 դոլարի փոխարժեքը նախ անցավ 400 դրամի հոգեբանական սահմանը, ապա շարունակեց բարձրանալ՝ հասնելով մինչեւ 419 դրամի: Դրա սկզբնապատճառը միջազգային շուկայում դոլարի նկատմամբ եվրոյի ուժեղացումն էր: Դրան, մեզ մոտ, ինչպես միշտ, գումարվում է մեր բնակչության գերվստահությունը դոլարի նկատմամբ եւ դրանով պայմանավորված սպասումները: Երբ մարդիկ նեսվում են իրենց մոտ եղած դրամը դոլար դարձնելու ,վերջինիս գինն ավելի է բարձրանում, եւ ունենում ենք գերարժեւորված դոլար:

Մեր մոտ մեկ ամիս առաջվա հրապարակմամբ («Պետք չէ ցնցվել դոլարի ամեն ցնցման հետ», «**Ազգ**», 06.06.2012 թ.), նշելով, որ փոխարժեքը կախված է բազմաթիվ՝ ներքին եւ արտաքին գործոններից, եւ հստակ հնարավոր չէ ասել, թե փոխարժեքն ինչ տատանումներ կունենա առաջիկայում, միաժամանակ կանխատեսել էինք, որ առաջիկա շաբաթներին դոլարը կսկսի թուլանալ, իսկ դրամը՝ արժեւորվել: Դա բացատրել էինք սեզոնային գործոնով՝ գյուղմթերքների առատությամբ, երբ դրամը ամառային ամիսներին ավանդաբար ուժեղանում է: Ինչը եւ տեղի ունեցավ, թեեւ ակնկալում էինք, որ այս գործընթացն ավելի շուտ կսկսվի, քանի որ դոլարն այս ամբողջ ընթացքում թանկ էր մնում բացառապես բնակչության սպասումների շնորհիվ: Դրա վկայությունն էին բորսայում գործարքների ցուցանիշները, երբ օրական վաճառվում էր 1-3 մլն դոլար կամ լինում էր օր, երբ ընդհանրապես չէր վաճառվում, այսինքն՝ մեծ պահանջարկ չկար, բայց բարձր գինը պահպանվում էր: Այս միտումն, ի վերջո, տեղի տվեց վերջին 2-3 օրերին, երբ դոլարի արժեքը վերջապես սկսեց նվազել, չնայած օրական բորսայում ավելի շատ՝ 4-4,5 մլն դոլար էր վաճառվում: Ինչը վկայում էր դոլարի ինչ-որ տեղ արհեստական գերարժեւորման եւ բնական փոխարժեքին մոտենալու միտումի մասին:

Այս պարագայում բոլորին հետաքրքրում է, թե ինչպիսի՞ հետագա վարքագիծ կունենա փոխարժեքը: Մեկ անգամ եւս ցանկանում ենք ընդգծել, որ փոխարժեքի վրա ազդում են բազմաթիվ գործոններ՝ ներքին եւ արտաքին, ու հստակ կանխատեսում անել հնարավոր չէ: Սակայն, հաշվի առնելով առկա գործընթացները եւ նախորդ տարիների այս ժամանակահատվածի փոխարժեքի դրսեւորումները, կարելի է ենթադրել, որ գոնե մինչեւ աշուն, առաջիկա 1,5 ամիսներին դրամի արժեւորման միտումը կշարունակվի: Բնական է, որ հնարավոր չէ ասել, թե դրամը մինչեւ ուր կարժեւորվի, կվերադառնա՞ 1 դոլարը՝ 390-400 դրամի միջակայք, թե՞ ոչ:

Ի դեպ, կարծում ենք արժե անդրադառնալ այն տեսակետին, որ ազգային արժույթի թուլացումը խրախուսում է արտահանումը: Դասական առումով դա այդպես է, բայց Հայաստանի տնտեսության պարագայում դա իսկապե՞ս որոշիչ գործոն է արտահանման ծավալների ավելացման համար, թե՞ ոչ: Այս թեմային կանդրադառնանք առաջիկայում:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Դավութօղլուն անհրաժեշտ է համարում «1915-ի հարցում նոր մոտեցում» դրսեւորելը

Նրա մոտեցումը, սակայն, թուրքական ժխտողականության նորովի շեւակերպումն է՝ հարմարեցված նոր պայմաններին

ՀԱԿՈԲ ՉԱՔԲՅԱՆ

Օրերս Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի խորհրդականը Ելիսեյան պալատում ընդունել է ֆրանսահայ համայնքի ներկայացուցչին: Ընդունելությանը ներկայվել են Հայոց ցեղասպանության ժխտողականությունը քրեականացնող նոր օրինագծի, ինչպես նաեւ երկրի նախագահի՝ համայնքի ներկայացուցիչների հետ այս ամիս նախատեսվող հանդիպման մանրամասները:

Հանդիպմանն իսկույն արձագանքել էին թուրքական լրատվամիջոցները՝ մտահոգ նոր օրինագծով: Մինչդեռ նախագահի պաշտոնում Օլանդի ընտրությամբ Ֆրանսիայի հետ հարաբերությունները բարելավելու շրջանակներում Թուրքիան փորձում էր օրակարգից դուրս բերել այդ օրինագիծը, օգտագործելով Սիրիայի նախագահ Բաշար Ասադի իշխանության տապալման հանդիպումը:

Հանդիպումն իսկույն արձագանքեց Արեւմուտքի հանձնարարականով թագավորից ավելի թագավորական հանդես գալու հանգամանքը:

Ավելին, Փարիզում Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուի հետ մամուլի համատեղ ասուլիսում Լորան Ֆաբիուսը օրինագծի ճակատագրին առնչվող հարցին ի պատասխան ասել էր. «Սահմանադրական խորհուրդն արդեն հակասահմանադրական է առնչությամբ Արեւմուտքի հանձնարարականով թագավորից ավելի թագավորական հանդես գալու հանգամանքը:

Ավելին, Փարիզում Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուի հետ մամուլի համատեղ ասուլիսում Լորան Ֆաբիուսը օրինագծի ճակատագրին առնչվող հարցին ի պատասխան ասել էր. «Սահմանադրական խորհուրդն արդեն հակասահմանադրական է համարել այդ օրինագիծը, հետեւաբար հնարավոր չէ դա նորից օրակարգ բերել»:

Սակայն հաջորդ օրը Ելիսեյան պալատը հայտարարեց, որ հեռախոսազրույց է ունեցել հայ համայնքի ներկայացուցչի հետ, հիշեցրել է նախընտրական քարոզարշավի ժամանակ նախագահի տված խոստումը եւ ընդգծել՝ ինքը դա կկատարի:

Տես էջ 4

ՀՀԿ, ՕԵԿ, Կոմկուս

Այս ուժերից բացի՝ մնացած կուսակցությունները շփումներ ունեն աղանդավորական կառույցների հետ

ՀԱՄՄԻԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՄՆ պետդեպարտամենտի 2011-ին հրապարակված Հայաստանի վերաբերյալ կրոնական զեկույցը տեղեկացնում է, որ Հայաստանում բնակվող ավելի քան 3 միլիոն բնակչի 90 տոկոսը Հայ առաքելական եկեղեցու հետեւորդ է, մնացածը՝ կրոնական տարբեր կազմակերպությունների են հարում:

Մինչդեռ «Քայքայիչ պաշտամունքից տուժածների օգնության եւ վերականգնողական կենտրոն» ՀԿ-ի նախագահ **Ալեքսանդր Ամարյանի** տվյալներով՝ բնակչության 350-360.000-ը Հայ առաքելական եկեղեցու հետեւորդ չեն, նրանց քառասուն տոկոսը հարում է քայքայիչ ամենատարբեր աղանդներին:

«Քայքայիչ աղանդներն այն կառույցներն են, ովքեր արգելված մեթոդներ են կիրառում իրենց կազմակերպության մեջ մարդկանց ընդգրկելու համար, եթե կրոնական կառույցն իր էությամբ փակ է, այսինքն՝ իր հասարակ անդամը չի կարող է տեղյակ լինել, թե ինչ է կատարվում կազմակերպության ներքին խոհանոցում»: Համաձայն ԱՄՆ պետդեպի զեկույցի, աղանդավորական կազմակերպությունները ֆինանսավորվում են արտասահմանից, հիմնական ուղղությունները ԱՄՆ-ն, Չինաստանն ու Գերմանիան են:

Հայաստանում առավել ակտիվ են «Եհովայի վկաները», «Մորմոնները», «Կյանքի խոսքը»: Հատկապես ակտիվ եւ առավել վտանգավոր են «Եհովայի վկաներ»-ն ու «Կյանքի խոսք» աղանդի հետեւորդներն ու քարոզիչները:

Այս կրոնական կառույցները հովանավորությունը կատարում են ցանցային մարկետինգի միջոցով: Այս սզբունքով են աշխատում նաեւ կոսմետիկայի հայտնի ֆիրմաները: Mary Key, Faberlic, Oriflame ընկերությունները, որոնք հայտնի են նաեւ հայ սպառողին, առնչություններ ունեն կրոնական կազմակերպությունների հետ եւ նրանցից ֆինանսավորվում են:

Տես էջ 2

Վիտալի Բալասանյան. «Ես փոփոխությունների եւ առաջընթացի թեկնածուն եմ»

ԼՂՀ նախագահի թեկնածու Վիտալի Բալասանյանի քաղաքական գործունեությունը սկսվել է 1991 թ., երբ նա ընտրվեց ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր: Այնուհետեւ երկու անգամ Բալասանյանը պատգամավորի մանդատ է զբաղեցրել Արցախի օրենսդիր մարմնում: 2005 թ. խորհրդարանական ընտրություններում «ՀՅԴ-Շարժում-88» դաշինքի համամասնական ցուցակով ընտրվել է ԼՂՀ 4-րդ գումարման Ազգային ժողովի պատգամավոր, եղել է պաշտպանության, անվտանգության եւ օրինաստեղծության հարցերի մշտական հանձնաժողովի անդամ: 1999 թ. սեպտեմբերից նշանակվել է ԼՂՀ պաշտպանության նախարարի տեղակալ: 2010 թ. պատգամավոր է ընտրվել ՀՅԴ համամասնական ցուցակով: Այժմ Դաշնակցություն խմբակցության անդամ է: 2007-2010 թթ. եղել է նաեւ ԼՂՀ նախագահի խորհրդական: Արժանացել է Արցախի հերոսի «Ոսկե արծիվ» շքանշանի (ԼՂՀ) եւ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի (ԼՂՀ):

- Պարոն Բալասանյան, ո՞րն է նախագահական ընտրություններում առաջադրվելու ձեր դրդապատճառը:

- Նախագահական ընտրություններում իմ առաջադրվելու հիմնական պատճառը երկրում առկա սոցիալ-տնտեսական ծանր վիճակն է, հեղինակությունը ժողովրդավարության բնագավառում, արտաքին քաղաքականության բացակայությունը, բարեփոխումների անհրաժեշտությունը պաշտպանության եւ այլ ոլորտներում: Ես պատահական մարդ չեմ այս երկրում, դեռ 90-ականներից ակտիվորեն մասնակցում եմ երկրի քաղաքական կյանքին, պատերազմը սկսելուն պես հրամանատարական պաշտոններ եմ զբաղեցրել պաշտպանության բանակում, եւ երկրի ներկայիս ծանր վիճակը լրջագույնս մտահոգում է ինձ:

- Ինչո՞ւ պետք է արցախցին Ձեզ ընտրի: Ի՞նչ փոփոխություններ եք առաջարկում նրանց կյանքն առավել հարմարավետ դարձնելու ուղղությամբ:

- Ես առաջարկում եմ առկա վիճակի փոփոխություն, բիզնեսի եւ իշխանության հստակ տարանջատում, գործարարության համար նպաստավոր պայմաններ, պայքար երկրում ծաղկած կոռումպացվածության եւ հովանավորչության դեմ:

Ես առաջարկում եմ փոփոխություններ պաշտպանության բնագավառում, ինչը թույլ կտա բացառել թշնամու կողմից մեր զինվորների սպանությունը:

Տես էջ 4

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

«Թաց երաշտ» եւ սակավաջրություն

Բնապահպանների բնութագրմամբ՝ «թաց երաշտ»-ի պայմաններում անհակասանալի եւ առեղծվածային է Սեւանից նորմայից շատ ջուր բաց թողնելու որոշումը: **Կարինե Դանիելյանն**՝ օրինակ, չի հասկանում՝ ինչպե՞ս սացվեց, որ ձյունառատ ձմեռվանից, տեղացած հորդառատ անձրեւներից հետո երաշտային վիճակ ստեղծվեց եւ անհրաժեշտություն առաջացավ Սեւանից առավել քանակությամբ ջուր բաց թողնելու:

«Մենք չենք ասում՝ երաշտ, ասում ենք՝ սակավաջուր իրավիճակ», ՄԻՊ գրասենյակում տեղի ունեցած քննարկմանը նշում է ջրային տնտեսության պետական կոմիտեի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ **Միհր Մկրտումյանը**՝ հավելելով, որ Սեւանը պետք է լինի մարդակենտրոն: Նրա ներկայացմամբ՝ այսօր 39.000 հա հողատարածք Սեւանի ջրի կարիք ունի, եւ պետությունը չի կարող մի քանի հազար գյուղացիների թողնել առանց ջրի, մանավանդ որ եղանակային պայմանները բարենպաստ են, եւ գյուղացին առաջ բերք է սպասում: Մկրտումյանի ներկայացմամբ՝ ջրամբարները կիսով չափ են լցված. Արարատի ջրամբարում 39 միլիոն խմ ջուր կա, իսկ Ազատանի ջրամբարում՝ 63: Ակնալիճում գտնվող պոմպակայաններն էլ ջրով առաջ չեն, 6 պոմպակայանից միայն 2-ն են աշխատում:

Թե ինչո՞ւ չկան ջրային ռեսուրսներ, ՀՀ ԱԻՆ Հիդրոմետ ծառայության հիդրոլոգիայի կենտրոնի պետ **Լեւոն Ազիզյանն** ասում է, որ գարնանը ջերմաստիճանը կտրուկ բարձրացել է, գարնանը հորդառատ անձրեւներ չեն գրանցվել, հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին անձրեւ չի տեղացել, ինչի հետեւանքով հողը չորացել է եւ տեղումներից հետո կլանել է ջուրը: Ավելին, եթե նախորդ տարիներին գարնանային վարարումների ժամանակ Սեւանի մակարդակը բարձրանում էր 50 սմ-ով, այս տարի բարձրացել է 23 սմ-ով: Եթե վերջին տարիներին Ախուրյանի ջրամբարը միշտ լցվել է, այս տարի չի էլ բարձրացել:

Միհր Մկրտումյանի ներկայացմամբ էլ Սեւանից արդեն բաց է թողնվել 145 միլիոն խմ ջուր: Նույնիսկ էլ նախատեսվում է բաց թողնել: Բնապահպան **Ինգա Զաքարյանի** փոխանցմամբ՝ ոռոգման սեզոնը մեկնարկում է հունիսի 2-ին, մինչդեռ այս տարի մայիսի 2-ին են Սեւանից ոռոգման համար ջուր բաց թողել: «Իսկ ի՞նչ պետք է անեք, եթե, ասենք, օրենքը չընդունվի եւ արգելվի հավելյալ քանակով ջրի բացթողումը: Հուլիս-օգոստոս ամիսներին ի՞նչ է անելու գյուղացին»:

«Ձեզ պետք է տեղեկացնեմ , որ օրենքն արդեն ընդունվել է, նաեւ երկրորդ ընթերցմամբ», ասաց Մկրտումյանը: Բնապահպանների ներկայացմամբ՝ օրենքի ներկայացումն ու ընդունումը առեղծվածային էին: Խորհրդարանում անցկացված լսումներին բնապահպաններին չեն թույլատրել մասնակցել: Օրենքն ընդունվել է հապշտապ, իսկ կառավարության կայքում նախարարությունների դիրքորոշումը տվյալ հարցում չկա: Աժ գյուղատնտեսական եւ բնապահպանական հարցերի հանձնաժողովի փորձագետ **Յուրի Խալաթյանը** համամիտ է՝ արագ է ընթացել, քանի որ խորհրդարանը նոր էր ձեւավորվել, եւ պետք է գնային հանգստի: «Դա է պատճառը, որ օրենքը շուտափույթ է ներկայացվել, քննարկվել եւ ընդունվել», ասում է Խալաթյանը: «Այսինքն ձեզ համար Սեւանը անլուրջ մի հարց է, որ կարող եք շուտափույթ նման օրենք ընդունել», հարցրեց Սիլվա Ադամյանը: «Ո՛չ, ուղղակի ժամանակ չկար, հետո ի՞նչ անեինք, թողնեինք գյուղացին մնար առանց ջրի՞», շարունակում է Խալաթյանը:

Թեպետ բնապահանության նախարարությունը ՄԻՊ-ին ուղղված նամակում դրական եզրակացություն է տվել, սակայն քննարկման մասնակիցներից **Արթուր Զոհրաբյանը** հիշեցրեց, որ մեկ շաբաթ անց Եվրոմիության ներկայացուցիչ Հերման վան Ռոմպոյի հետ հանդիպմանը բնապահպանության փոխնախարար Սիմոն Պաղյանը մտահոգություն է հայտնել Սեւանից լրացուցիչ ջուր թողնելու վերաբերյալ եւ ասել, որ նախարարությունը դեմ է, որ անգամ մեկ կաթիլ ջուր բաց թողնվի: Թե ինչով է բացատրվում նույն գերատեսչության երկու բարձր պաշտոնյաների կարծիքների տարբերությունը, նախարարության աշխատակիցները չցանկացան բացատրել՝ հավելելով, որ պաշտոնական դիրքորոշմամբ Արամ Հարությունյանը դեմ չէ:

Հ. Հ.

Ձերբակալվածների՝ լոգանք ստանալու, բուժզննում անցնելու եւ պաշտպան ունենալու իրավունքները հիմնականում խախտվում են

Ոստիկանության ձերբակալվածների պահելու վայրերում (ՁՊՎ) վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խումբը հաշվետվություն է ներկայացրել նախորդ տարվա գործունեության վերաբերյալ: Անցյալ տարվա ընթացքում իրականացվել է 70 պլանային եւ 98 արտահերթ այցելություն ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներ, ներկայացվել է 76 հրատապ հաշվետվություն, դրանց մեծ մասը դրական լուծում է ստացել:

Նախորդ տարվա ընթացքում կատարված իրավախախտումների համար 24 ոստիկան խիստ նկատողության է արժանացել, նրանցից 3-ը մարզային բաժինների պետեր են: Դիտորդական խմբի ղեկավար **Սուրեն Իսկանդարյանի** գնահատմամբ՝ արդյունքը գոհացուցիչ է, եւ հենց դա է նպաստել, որ ոստիկանության վերաբերմունքը դիտորդական խմբի վերաբերյալ փոխվի:

Լուսինե Մինասյանը դիտորդական խմբի անդամներից է: Նրա ներկայացմամբ՝ օրենսդրական դաշտում կան թերի կիրառվող, չկիրառվող եւ շատ հաճախ միմյանց հակասող դրույթներ: Պաշտպան ունենալը, բժշկական անհրաժեշտ օգնություն ստանալու, նույն սեռին պատկանող անձից խուզարկվելու իրավունքներն ու ազատ ժամանակն ըստ ցանկության տնօրինելու դրույթները թերի են կիրառվում:

ՁՊՎ-ներում քննչական սենյակների սակավաթվությունը նույնպես խնդիր է: Չի պահպանվում ռադիոընդունիչ ունենալու, լրագիր ստանալու իրավունքը: Ձերբակալվածի՝ տեսակցության իրավունքը հեռախոսազանգով փոխարինելու դրույթը նույնպես սահմանված չէ:

Շատ հաճախ չի ապահովվում բուժզննումը, լոգանք ընդունելու ձերբակալվածների իրավունքը: Թերի է կատարվում նաեւ տեսակցությունը կամ հեռախոսազանգը: Սրանք այն խախտումներն են, որոնք ամենաարդիականն ու տարածվածն են:

Սահմանափակվում է փաստաբան ունենալու իրավունքը: ՁՊՎ-ներում պահվող անձանց շատ քիչ տոկոսն է ունեցել պաշտպան: Պատճառը ոչ միայն իրավունքներին տիրապետելն ու տեղեկացվածությունն է, որ պետք է ունենալ փաստաբան կամ հանրային պաշտպան, այլեւ քննիչների ոչ օրինաչափ գործողությունները, ովքեր չեն տեղեկացնում պաշտպանի ծառայությունների եւ ձերբակալվածի իրավունքների մասին: Եղել են դեպքեր, երբ պաշտպանի հետ առանձին զրուցելու իրավունքն անգամ չի պահպանվել: Եղել են դեպքեր, երբ առանց հիմնավոր պատճառների հարցաքննությունն իրականացվում է գիշերային ժամերին, մինչդեռ օրենքը պահանջում է, որ միայն անհետաձգելի քննչական գործողությունները կատարվեն գիշերը:

Լուրջ խնդիր է նաեւ, որ քննչական գործողությունները կատարվում են տարածքից դուրս՝ ոստիկանության բաժիններում, որտեղ հասարակական վերահսկողություն չկա: Որպեսզի անձանց նկատմամբ բռնության հնարավոր դեպքերը կանխարգելվեն, պետք է քննչական գործողությունները կատարվեն ՁՊՎ-ներում: «ՁՊՎ-ների վիճակը դրական է», ասում է ոստիկանության հասարակական կարգի ապահովման վարչության պետի տեղակալ **Կարեն Մեհրաբյանը**՝ շեշտելով, որ նույն կարծիքն է հայտնել նաեւ ՄԱԿ-ի խոշտանգումների կանխարգելման կոմիտեն: Նրա ներկայացմամբ՝ կան բազմաթիվ հարցեր, որոնք ոստիկանությունը չի կարող լուծել: Այսօր ոստիկանության համակարգում կա ՁՊՎ-ների 40 շենք, դրանց գերակշռող մասը 40 տարվա վաղեմություն ունի: Մեծ մասը հարմարեցված չէ՝ բացակայում են քննչական, տեսակցության եւ բուժօգնության համար նախատեսված սենյակները: Մեհրաբյանի խոսքերով՝ հիմնական պատճառը սենյակների բացակայությունն է: Եթե դրանք առանձնացված լինեն եւ համապատասխանեն օրենքի չափանիշներին, ապա օրենքի խախտումներ էլ չեն արձանագրվի:

Հ. Հ.

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Կքննարկվի գիտության մեջ սերնդափոխության հարցը

Հուլիսի 12-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում (Բաղրամյան 24, 2-րդ հարկ) տեղի կունենա ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի հանդիպումը երիտասարդ գիտնականների հետ: Հանդիպման նպատակն է երիտասարդ գիտնականների հետ քննարկել գիտության մեջ սերնդափոխության հիմնախնդիրները: Կարեւորագույն հարցերից է երիտասարդ ղեկավար կադրերի պատրաստումը՝ հիմնված գիտահետազոտական ինստիտուտների կադրային ներուժի վրա: Կքննարկվի, թե ինչ է անհրաժեշտ, որպեսզի գիտության մեջ պատրաստվեն թոփ մենեջերներ, ինչպես խթանել երիտասարդ գիտնականներին եւ ինչ հնարավորություններ է պետք ստեղծել ինստիտուտներում երիտասարդների աճի համար:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

ՀՀԿ, ՕԵԿ, Կոմկուս

1-ին էջից

Ամարյանը հավաստիացնում է, որ ունի Mary Key կոսմետիկայի վաճառքով զբաղվող ընկերության ձայնասկավառակը, որտեղ հստակ գրված է՝ ինչպես նպատակ դնել, համոզել մարդկանց, ներքաշել նրանց կրոնական կազմակերպության մեջ: Նույն կերպ են աշխատում նաեւ վերոնշյալ մյուս ընկերությունները:

Ամարյանը նշում է, որ մինչեւ 2010թ. Mary Key-ը Հայաստանում ապօրինի գործունեություն է ծավալել, ապրանքները Հայաստան են ներմուծվել մաքսանենգության միջոցով: Ամարյանը հիշում է, որ 2004-ին օդանավակայանում մաքսանենգության միջոցով Mary Key ընկերության ապրանքն են բռնել, որի մեջ մեծ քանակությամբ «Կյանքի խոսք» աղանդի մասին գրականություն կար:

«Պարզվեց, որ Mary Key-ի ղեկավարներից մեկը խարիզմատիկ եկեղեցու «զոհանչն» է: Mary Key-ում կան լիդերներ, որոնցից մի քանիսը կրոնական կառույցի ներկայացուցիչներ են, այնտեղ կան նաեւ մաքուր բիզնեսով զբաղողներ»:

«Կյանքի խոսք» աղանդը հովանավորում է նաեւ բազմաթիվ երգիչ-երգչուհիների, դերասանների, նրանց տրամադրում գումար, տեխնիկա, ապահովում մասնակցություն տարբեր համերգների, արարողությունների, ինչի հետեւանքով բազմաթիվ հայտնի դեմքեր նաեւ հրապարակավ խոստովանում են, որ «Կյանքի խոսք» աղանդի հետեւորդ են:

Ինչպես երգիչներն ու դերասանները, այնպես էլ քաղաքական կուսակցությունները համագործակցում են աղանդների հետ: Սա նորություն չէ, եւ երեւույթը միայն Հայաստանում տարածված չէ: Ուսումնասիրություններով՝ ԱՊՀ տարածքում՝ Վրաստանում, Ուկրաինայում եւ այլ երկրներում հեղափոխությունների ամենաակտիվ եւ գազազած զանգվածը հենց աղանդավորներն էին՝ հատկապես խարիզմատիկ աղանդների հետեւորդները, ինչպիսին է «Կյանքի խոսք»-ը:

Աղանդավորների օգնությանը շատ հաճախ դիմում են նաեւ քաղաքական կուսակցությունները: Այդ համագործակցությունը հատկապես ակտիվ է ընտրությունների շրջանում: Ամարյանը շեշտում է, որ որոշակի գումարի դիմաց այս կամ այն կրոնական կառույցի ղեկավարները վաճառում են արդեն «բույսի վերածված» հետեւորդների ձայները, կարող են նրանց տանել միտինգի, ստիպել հարվածել, վիրավորել:

ՀՀԿ, ՕԵԿ եւ Կոմկուս: Սրանք այն կուսակցություններն են, որոնք ըստ Ա. Ամարյանի խորհրդարանական ընտրությունների ժամանակ կրոնական կազմակերպություններից աջակցություն չեն ստացել:

«Մյուս կուսակցությունները բանակցություններ են վարել կրոնական կազմակերպությունների հետ, բայց թե ինչքանով են աշխատել այդ բանակցությունները, չեմ կարող ասել», ասաց Ամարյանը՝ հավելելով, որ քաղաքական կուսակցությունների եւ կրոնական կառույցների միջեւ շփումների մասին տեղյակ է պահել համապատասխան կառույցներին:

Ցավակցություն

Հայաստանի ժուռնալիստների միությունը խոր վիշտ է ապրում ճանաչված լրագրող, խմբագիր **Վարդան Սուրենի Գրիգորյանի** անժամանակ մահվան առթիվ եւ ցավակցում է հանգուցյալի հարազատներին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 581841
060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Հայաստանում ծնվեցին «ձախերը»

Աշոտ Մանուչարյանը դեռևս նախքան խորհրդարանական ընտրությունները, երբ մի խումբ առավելաբար երիտասարդ ակտիվիստներ գիշերում էին Մաշտոցի այգում, առաջարկեց ընդդիմադիր կուսակցություններին համամասնական ցուցակներում ընդգրկել նաև այս երիտասարդների անունները, չլսեցին, թերևս այս երիտասարդների ժամանակը դեռ չէր եկել, բայց գալու է...

Օրինակ՝ Բիլ Քլինթոնը, երբ այնքան երիտասարդ էր, որ իրեն ճանաչում էին միայն նեղ շրջապատում, այն էլ որովհետև լավ սաքսոֆոն էր նվագում, մի առիթով հրապարակային պատռեց ամերիկյան որոշ խորհրդանիշներ, փախավ Կանադա... ու շատ տարիներ անց դարձավ ԱՄՆ նախագահ: Իսկ այսօր Եվրոպայում մեծ կշիռ ունեցող մի շարք կուսակցություններ ծնվել են որպես բնապահպանական շարժումներ, հետևաբար «երեկ» Մաշտոցի այգում գիշերողները «վաղը» մեծ հեռանկարներ կարող են ունենալ...

Բայց ովքե՞ր են նրանք, ի՞նչ են ուզում, ինչպե՞ս են հասնում իրենց ուզածին կամ հասնո՞ւմ են արդյոք...

Նախ՝ նրանք որոշ, գրեթե ընդհանուր կրթական մակարդակով հիմնականում երիտասարդներ են, հետևաբար սա հասարակական ընդվզում չէ, քանի որ այստեղ չկան, օրինակ, կոշկակարներ, ծաղկավաճառներ, հագուստ վաճառողներ... Ժողովուրդ: Անշուշտ, ակտիվիստները փորձում են շարժումը ներկայացնել որպես հասարակական ընդվզում, իհարկե սա կարող է եւ հանդիսանալ այդ ընդվզման հիմք, սակայն այսօր սա ընդվզում չէ, քանի որ մասսայական չէ: Ուշագրավ է, որ, օրինակ, Թեղուտում զուտ բնապահպանական խնդիրների լուծման համար պայքարող ակտիվիստները գրեթե ողջ կազմով հայտնվեցին Մաշտոցի այգում՝ թույլ չտալով այնտեղ կրոնական ու սոցիալական իրավիճակն ունեցող երկրներում ու դրանցից ելնելով սկսում են պայքարել արդարության համար, հարստության դեմ գաղափարն են առաջ տանում («ռոբինհուդություն») ու պայքարում են քաղաքականության մեջ անձնական մասնակցություն ունենալու համար:

Այս շարժումը Հայաստանում բերեց որոշակի նոր իրավիճակ, իշխանությունները սկսեցին զիջումներ անել, այլ կերպ ասած՝ «ձախերը» ստիպեցին իշխանությանը՝ զիջումներ անել: Օրինակ՝ նույն Մաշտոցի այգում: Կարելի է ասել, որ այս շարժումների հետեւանքով Հայաստանում սկսվեց, պատկերավոր ասած, «քաղաքական բանավեճերի եվրոպականացում», երբ հասարակական որոշակի խումբը կարող է եւ, ամենակարեւորը՝ ցանկանում է որոշ հարցեր լուծել ու լուծում է: Սակայն ուշագրավ է, որ «ձախերը» կարողանում են ստիպել իշխանություններին, որ նրանք կատարեն զիջումներ միայն այն հարցերում, որոնք, իշխանությունների կարծիքով, կարեւոր չեն կամ այնքան կարեւոր չեն, որից կախված լինի իշխանության ամբողջականության պահպանումը:

Բնականաբար այս ակտիվությունը պետք է շարունակվի, ապրելու եւ սոցիալական իրավունքներ ունենալու համար: Ինչպես ասում է Մաշտոցի այգուն նվիրված երգը՝ «Ինչ-որ մի բան պիտի անենք, ինչ-որ մի բան պիտի անենք, ինչ-որ մի բան պիտի անենք, ինչ-որ մի բան պիտի անենք...»:

ՀՈՎՀԱՆՆԻՍ ԱՔՅԱՆ

«Գիլյոտինի» կարիքը ժամանակ առ ժամանակ կլինի

26 հազար իրավական ակտերից առնվազն 30 տոկոսը կվերանա կամ կկրճատվի

Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի գործունեության մեկնարկի առիթով երեկ կառավարությունում կենտրոնի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար **Արմեն Եղիազարյանը** հանդիպեց լրագրողների հետ: Խոսելով կենտրոնի ստեղծման մասին՝ նա նշեց, որ նպատակն է բոլոր օրենսդրական ակտերը, որոնց թիվը մոտ 26 հազար է, տեսնել թե դրանք որքանով են խելամիտ, վերացնել կամ կրճատել դրանց քանակը: Ելնելով փորձից, «գիլյոտին» անվանումը ստացած նման ծրագրերի իրագործման ժամանակ իրավական ակտերի 30-50 տոկոսի հետ այդպես է լինում: Նման խնդիր դրված է նաեւ կենտրոնի առջեւ:

Ըստ Արմեն Եղիազարյանի, օրենսդրական կարգավորման խորհրդի որոշմամբ, որի նախագահը վարչապետն է, եւ որը ղեկավարում է կենտրոնի գործունեությունը, արդեն նախանշվել են երեք ոլորտներ, որոնց օրենսդրական կարգավորումը առաջնահերթ կդիտարկվի: Դրանք հանրային ծառայություններն են, տրանսպորտը եւ առողջապահությունը: Մասնավորապես՝ գազի, ջրի, էլեկտրաէներգիայի, հեռահաղորդակցության օրենսդրությունները, մարդասիրական եւ բեռնատար փոխադրումները, դեղատներն ու ատամնաբուժական կլինիկաները: Կհետեւացվեն գործընթացները, որոշ լիցենզիաներ կհանվեն: Ըստ Արմեն Եղիազարյանի, այս դեպքում մի կողմից հետեւանքում է բիզնեսի գործընթացը եւ աշխատատեղեր են ստեղծվում, մյուս կողմից՝ բնակչության սպասարկման որակի վրա կարող է ազդեցություն ունենալ: Դրա համար պետք է այնպես անել, որ հավասարակշռված լինեն փոփոխությունները:

Հաջորդ ոլորտներն այս տարվա ընթացքում կլինեն կրթությունն ու շինարարությունը, իսկ եկող տարի՝ հարկային եւ մաքսային օրենսդրությունները: Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը հայտնեց, որ կենտրոնն իր էջն ունի ֆեյսբուքում, ունենալու է իր կայքն ու հեռախոսային թեժ գիծը, որպեսզի բնակչության եւ բիզնեսի հետ կապի միջոցով հստակեցնի, թե ինչ են նրանք պահանջում եւ ինչ դժգոհություններ ունեն:

«Ինչպիսի՞ն կլինեն Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի գործունության արդյունքները» հարցին պատասխանելով՝ Արմեն Եղիազարյանն ասաց, որ նման ծրագիր իրականացնող երկրներից, օրինակ՝ Վիետնամում մաքրվել է օրենսդրության կեսը, իսկ Խորվաթիայում՝ մոտ 30 տոկոսը: Միաժամանակ, նա նշեց, որ կան հաշվարկներ, որոնք փաստում են, որ նման ծրագրերի շնորհիվ 4-5 տոկոս համախառն ներքին արդյունք (ՀՆԱ) է խնայվում:

«Ազգի» հարցին թե ի՞նչ կլինի, երբ «գիլյոտին» ծրագիրը ավարտվի եւ նորից իրավական ակտերը մի քանի տարվա ընթացքում սկսեն շատանալ, Արմեն Եղիազարյանը պատասխանեց, որ նախ ծրագրի գործունեության արդյունքներն ամփոփող գործակալություն կստեղծվի, ապա ժամանակ առ ժամանակ անհրաժեշտ կլինի կրկին անդրադառնալ այս խնդրին:

Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի գործունեության ծախսերի մասին Արմեն Եղիազարյանն ասաց, որ այն գործելու է երկու տարի: Ծրագրի ամբողջ արժեքը 2 մլն դոլար է: Մոտ 500 հազար եվրո կազմում են կենտրոնի 24 աշխատակիցների աշխատավարձերը, որոնք տրվում են Ավստրիայի զարգացման գործակալության տրամադրած դրամաշնորհից: Ծրագիրը ֆինանսավորում են նաեւ Համաշխարհային բանկը, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը, ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը, ԵԱՀԿ-ն եւ Հայաստանի կառավարությունը: Ըստ Արմեն Եղիազարյանի՝ միայն կենտրոնի սարքավորումներն են ձեռք բերվել վարկով, իսկ մնացածը դրամաշնորհներ են:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ՈՒԺԻ» ՅՈՒՅԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համանախագահները եկան...

1-ին էջից

Մի «տեսաբան», որ ինքնությունը թաքցրել էր, նույնիսկ մեջբերել էր ԱՄՆ էխս նախագահ Քլինթոնի՝ կանադական Քվեբեկի առաջնորդներին ուղղված խոսքը. «Եթե դուք մտածում եք ձեր անկախության մասին, ապա չպետք է մոռանաք նաեւ փոխադարձության իրավունքները»: Ակնարկը պարզ է՝ «եթե ԼՂ հայերն անկախություն են ուզում, ապա չպետք է մոռանան նաեւ նախկինում այնտեղ ապրած ադրբեջանցի փոխադարձության իրավունքները»:

Ռուսներն ասում են, որ «մահակը երկու ծայր ունի»: Եվ նույն «տրամաբանությամբ» կարելի է ասել, որ Ադրբեջանն էլ իր անկախությունը պարտավոր էր պայմանավորել մի ամբողջ խումբ էթնիկական փոխադարձությունների իրավունքներով, ինչը չի արվել: Ավելին, իրեն «բազմազգ եւ բազմամշակութային» անվանող երկիրը սահմանադրությամբ ունիտար է: Մի իրավական համակարգ, որը լիովին բացառում է էթնիկ փոխադարձությունների ամենատարրական իրավունքների իրացումը, քանի որ Ադրբեջանում «բոլորը ադրբեջանցի են» սկզբունքն է դրված պետական իշխանության եւ հասարակական ինքնակազմակերպման, նույնիսկ քաղաքական եւ հոգեւոր-մշակութային ինստիտուտների ձեւավորման հիմքում:

Ինքնադրսեւորման երկակիությունը Ադրբեջանի համար դարձել է կայուն կենսակերպ: Դա արտացոլվում է գրեթե բոլոր ասպարեզներում: Այդ երկրում նույնիսկ մարզամշակութային լուրերին է «հայրենասիրական» երանգավորում տրվում: Ադրբեջանական մամուլում կարելի է կարդալ, մասնավորապես, այդ բնույթի տեղեկատվություն. «Ձախջախիչ հաղթանակ տանելով հայի հանդեպ՝ ադրբեջանցի մարզիկը նվաճեց ...»:

Հոգեգարության նման մթնոլորտ ձեւավորող իշխանությունը, հասկանալի է, չէր կարող բաց թողնել առիթը եւ համանախագահների տարածաշրջանային այցը «չհամեմեր» լայնածավալ զորավարժություններով: Ընդսմին՝ դրանք ուղեկցելով «մերձակատային գոտի», «արդիական զինտեխնիկա եւ սպառազինություններ» որակումներով: Չէր կարող նկատել չտալ, որ «զորավարժությունները ղեկավարում է անձամբ պաշտպանության նախարար գեներալ-գնդապետ Սաֆար Աբիեւը»:

Տպավորություն է ստեղծվում, թե խոսքը նորօրյա «Մակեդոնացու» մասին է, որի միայն ներկայությունը «մերձակատային գոտում ահուսարսափ է տարածելու» ԼՂՀ պաշտպանության բանակի վրա: Սրանք, ինչ խոսք, էժանագին քարոզչության հերթական դրսեւորումներ են: Ավելի բնութագրական է, որ մինչ համանախագահները եւս մեկ անգամ հաստատեցին ղարաբաղա-ադրբեջանական զորքերի ճգման գիծը՝ խորհրդանշելով, որ այն դիմակայության գծից կարող է եւ պետք է վերածվի երկու ժողովուրդների եւ հասարակությունների միջեւ բարիդրացիական հարաբերությունների սկզբնակետի, Ադրբեջանն էլ իր հերթին «մերձակատային գոտում» զինավարժություններ սկսեց: Դա հստակ ազդանշան է, որ խաղաղության ճանապարհը Իլհամ Ալիեւի կողմից եւս մեկ անգամ մերժվել է:

Պետք է սպասել միջնորդների արձագանքին:

Վիտալի Բալասանյան. «Ես փոփոխությունների եւ առաջընթացի թեկնածուն եմ»

1-ին էջից

Առավել արդյունավետ ծախսել բյուջեն, հրաժարվել պետական աղարաշի սպասարկման համար նախատեսված շռայլ ծախսերից եւ այդ գումարներն ուղղել սոցիալական խնդիրների լուծմանը: Հսկակ քայլեր անել գյուղական ենթակառուցվածքների վերականգնման, գյուղատնտեսական արտադրանքի ավելացման ու մթերման ուղղությամբ: Վարել ակտիվ արտաքին քաղաքականություն Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման եւ Արցախյան խնդրի կարգավորման ուղղությամբ: Ցավոք, այսօր մեր երկրում արտաքին քաղաքականություն չի վարվում, մեկ տարի է՝ ԱԳ նախարար չունենք, այնինչ մենք հսկայածավալ գործ ունենք այս ոլորտում անելու:

- Կարո՞ղ եք առանձնացնել խնդիրների այն խումբը, որոնք այսօր հրատապ են Արցախի բնակչության համար եւ շտապ լուծման կարիք են զգում:

- Մեր հանդիպումներում բնակիչները հիմնականում սոցիալական խնդիրներ են բարձրացնում, խնդիրներ, որոնք սոցիալական անարդարության արդյունք են: Այս կտրվածքով ամենակարեւոր խնդիրը սոցիալական անարդարության վերացումն է, երբ թոշակների, պետական աշխատավարձերի միջեւ տարբերությունը կարող է լինել հազար տոկոս: Երբ մի թոշակառու կարող է ստանալ 30 հազար դրամ, մեկ ուրիշը՝ 300-400 հազար դրամ: Մեր բնակիչների մեծ մասը չեն ստանում սպառողական զամբյուղին գոնե հավասար թոշակ եւ աշխատավարձ, ինչը մեծագույն մարտահրավեր է հասարակությանը: Այսօր սպառողական զամբյուղն Արցախում, մասնագետների հաշվարկներով, մոտ 70 հազար դրամի է հավասար, եւ մենք ամեն ինչ պետք է անենք առաջիկա տարիներին նվազագույն աշխատավարձն ու թոշակը սպառողական զամբյուղին հասցնելու համար:

- Շուշի քաղաքի զարգացման համար ի՞նչ եք նախատեսում անել առաջիկա 5 տարվա ընթացքում:

- Մենք կարեւորում ենք Արցախի համաչափ զարգացումը, այս առումով ուշադրության կենտրոնում ոչ միայն Շուշին է, այլեւ մյուս շրջկենտրոնները, քաղաքներն ու գյուղերը: Այսօր բնակչության մի սվար զանգված կենտրոնացած է Ստեփանակերտում, բնակչության մեծությամբ հաջորդ բնակավայրը տասն անգամ զիջում է Ստեփանակերտին: Սա լրջագույն խնդիր է մեր անվտանգության, երկրի զարգացման տեսանկյունից: Մեր հիմնական ջանքերն ուղղված են լինելու ենթակառուցվածքների ստեղծմանն ու շրջաններում տների կառուցմանը, բիզնես միջավայրի ստեղծմանը՝ նպաստակ ունենալով երիտասարդներին հնարավորություն տալ աշխատելու եւ ընտանիք կազմելու իրենց ծննդավայրում՝ առանց հայացքն ուղղելու Ստեփանակերտին կամ ավելի հեռու:

Կոնկրետ Շուշին ես տեսնում եմ որպես Արցախի կրթական եւ մշակութային սիրտը, որն ունի համահայկական արժեք: Կարեւոր եմ համարում նաեւ Շուշիի՝ որպես հանգստավայր-առողջարանային կենտրոնի, վերականգնումը: Ես մեծ նշանակություն եմ տալիս հայապահպանության գործին Արցախի մասնակցությանը, որտեղ Շուշին իր առանձնահատուկ դերը կունենա:

- Բազմիցս խոսվել է ազատագրված տարածքների բնակեցման մասին: Այս առումով Դուք եւ Ձեր թիմը ինչպիսի՞ ծրագրեր եք մշակել:

- Մենք նպատակ ունենք ազատագրված տարածքների գյուղատնտեսական նշանակության հողերն անհատույց սեփականաշնորհել դարաբաղյան պատերազմի հետեւանքով փախստական դարձած հայերին, Արցախից դուրս ապրող Արցախյան պատերազմի մասնակիցներին, Արցախի բոլոր բնակիչներին՝ որպես ադրբեջանական ագրեսիայի, կրած նյութական եւ բարոյական վնասի փոխհատուցում: Թերբնակեցված այս շրջանները նույնպես, Արցախի մյուս շրջանների նման, լինելու են մեր ուշադրության կենտրոնում, այստեղ եւս նախատեսված են այն քայլերը, որոնք նկարագրեցի նախորդ հարցին պատասխանելու ժամանակ:

- Պարոն Բալասանյան, ինչպիսի՞ն է ձեր դիրքորոշումը ԼՂ հակամարտության կարգավորման վերաբերյալ: Որքանո՞վ է տարբերվում ներկա կառավարության դիրքորոշումից:

- Մենք պահանջելու ենք, որ հստակ գնահատական տրվի Արցախյան պատերազմին: Եթե կան միջազգային ինչ-ինչ կառույցներ, որոնց հետաքրքրում է Արցախի հարցը, ապա պետք է այդ կառույցները պատրաստ լինեն հստակ ասելու, թե ո՞վ է սկսել պատերազմը, եւ գնահատական տան նախահարձակ եղածին: Սա էապես կհեշտացնի կարգավորումը: Մենք նաեւ համոզված ենք, որ ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի միջեւ պետք է կնքվի ռազմավարական դաշինք, որտեղ Երեւանը հանդես կգա որպես Արցախի ժողովրդի եւ Արցախի տարածքային ամբողջականության երաշխավոր: Արցախյան կարգավորման հարցում ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի միջեւ պետք է լինի լիազորությունների եւ պարտականությունների հստակ տարանջատում, ինչը թույլ կտա Արցախը վերադարձնել բանակցային սեղանի շուրջը: Ի տարբերություն գործող իշխանությունների՝ իմ դիրքորոշումը Արցախի սահմանների վերաբերյալ հստակ է եւ անփոփոխ՝ մենք պետք է աղահովենք անվտանգությունն ու զարգացումը Արցախի Հանրապետության առնվազն ներկա փաստացի սահմաններում, եւ բացառում եմ որեւէ տարածքային զիջում հակառակորդին:

- Որպես պաշտպանության նախկին փոխնախարար՝ բանակում ինչպիսի՞ խնդիրներ կան, եւ ի՞նչ փոփոխություններ եք առաջարկում այդ խնդիրները լուծելու համար:

- Առավել կարեւորում եմ մարտական հերթապահության բարելավումը, հերթապահության օրերի կրճատումը, մեր զինվորի տեղակայումը անվտանգ, արդիական ինժեներական կառույցներում, թշնամուն դիտարկելու գործում էլեկտրոնային միջոցների օգտագործումը: Զինվորի կյանքը ամենաթանկն է մեզ համար, եւ պետք է բացառել թշնամու կողմից մեր զինվորի սպանությունը, ինչպես նաեւ կրճատել միջանձնային հարաբերություններով պայմանավորված մահերի թիվը:

- Պարոն Բալասանյան, ինչո՞վ կբացատրեք ՀՅԴ ԼՂՀ կառույցի դիրքորոշումը նախագահական ընտրություններին ներկա նախագահ Բակո Սահակյանի թեկնածությունը պաշտպանելու վերաբերյալ:

- Դա ես կանվանեի ՀՅԴ արցախյան կառույցի վերնախավի մի մասի եւ բյուրոյի որոշ անդամների, մասնավորապես Հրանտ Մարգարյանի դիրքորոշում: Վստահեցնում եմ, որ Դաշնակցության շարքերն իմ կողքին են եւ իրենց ձայնը տալու են ինձ:

- Ըստ վերլուծաբանների՝ հիմնական պայքարը Ձեր եւ Բակո Սահակյանի միջեւ է ընթանալու. Ինչպե՞ս եք գնահատում Ձեր շանսերը:

- Հաղթանակի իմ շանսերը բարձր են, քանզի ժողովուրդը մեծ մասամբ ճանաչում է ինձ: Ժողովրդի հիմնական մասը ձգտում է փոփոխությունների եւ առաջընթացի, հիասթափված է գործող նախագահի գործունեությունից: Ես փոփոխությունների եւ առաջընթացի թեկնածուն եմ:

- Ինչպե՞ս կգնահատեք նախընտրական պայքարը: Խաղի կանոնները հավասա՞ր են բոլորի համար:

- Նախընտրական պայքարը նորմալ է ընթանում, այս պահի դրությամբ խաղի կանոնները հիմնականում հավասար են, չհաշված մի քանի բացթողումներ, որոնց մեր շտաբն արձագանքում է:

- Ձեր հայտարարության մեջ շեշտել էիք, որ վարչական ռեսուրսն օգտագործվում է հօգուտ իշխանության, ընտրացուցակներն ուռճացվում են: Մանրամասն կասե՞ք՝ ինչ է արվում Արցախում:

- Մենք ահազանգել էինք նախընտրական քարոզարշավը սկսելուց առաջ: Քարոզարշավը դեռ չսկսած՝ Արցախի բոլոր շրջանների վարչակազմերի ղեկավարները, խախտելով օրենքը, սկսել էին նախընտրական քարոզարշավը եւ անօրինական կազմակերպչական աշխատանքներ էին տանում տեղերում՝ հօգուտ գործող նախագահի: Այդ գործում ընդգրկված էին նաեւ շրջանային տարբեր ծառայությունների ղեկավարներ:

Ընտրացուցակներում մեզ անհանգստացնում է այն, որ Արցախում չբնակվող հազարավոր քաղաքացիներ հաշվառված են ցուցակներում: Նախկին ընտրությունները ցույց են տալիս, որ ընտրացուցակների նման վիճակը ընտրախախտումների հիմք է դառնում:

Հարցազրույցը՝
ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ԱՆԴԵՆԱԿԱՆԻՑ

Զոհված զինվորի նամակը



Ես այս նամակը չէի գրի, բայց շուտով ծննդյանս օրն է, ու ես տեսնում եմ, որ ամեն անգամ դուք տխրում եք, երբ հիշում եք ինձ: Պետք է հասկանալ մի պարզ ճշմարտություն, որ կյանքը երկրի վրա տրված է իրականացնելու այն առաքելությունը, որի համար դուք լույս աշխարհ եկաք:

Ես երախտապարտ եմ նախախնամությանը, որ փոքրուց ցույց տվեց ինձ համար նախատեսված ճանապարհը, որով ես պիտի անցնեի: Հայկյան զորավոր բազկի, Վարդանի աննկուն, անձնազոհ հոգու, Անդրանիկի ազգիս նվիրվածությամբ տոգորված սիրտն էր տրոփում կրծքիս տակ... Կանգնել թույլի, տկարի, անպաշտպանի կողքին:

Հայրենիքս վիրավոր էր, պաշտպանի էր կարոտ: Անօրենը մահ էր սփռում ազգիս գլխին: Ամենուր որդեկորույս մայրերի հառաչանքներ էին լսվում: Խոշտանգված դիերի, ավերված ու այրված գյուղերի բողոքը բարձրանում էր առ Աստված:

Ների՛ր ինձ, մայրիկ, որ առանց քեզ տեղեկացնելու, ինքս էլ չէի հասկանում, թե ինչպես էի հայտնվում պատերազմի դաշտում... ու նորից վերադառնում տուն, որտեղ այլեւս ինձ հանգիստ չէի կարող զգալ:

Իսկ դուք, տղերք, հավատացեք, անհամբերությամբ էի սպասում ուսմանս ավարտին, որպեսզի մեկնեմ Արցախ՝ հրաշք մեր սրբավայրերը ազատագրելու արյունաբուխ թշնամուց: Երբ ստացա ծառայության ծանուցագիրը, ջերմություն ունեի: Անտեսելով մայրիկիս թախանձանքները, որ աղաչինվեմ՝ նոր մեկնեմ, համբուրեցի մայրիկիս ու հայտնվեցի զինկոմիսարիատում, որտեղից էլ՝ պատերազմի առաջին գիծ...

Լուսավորչի անմար կանթեղն էր լուսավորում հոգիս ու համարձակ առաջնորդում ինձ դեպի թշնամու դիրքերը՝ առաջնորդելով մարտական ընկերներիս:

Տղե՛րք, պատկերացրեք, 6 ամիս պատերազմի առաջին գիծ ու ո՛չ մի վախ, ո՛չ մի սարսափ, հավատացե՛ք: Ազատագրված տարածքներ, նաեւ զոհված շատ ընկերներ, որոնցից ամեն մեկը աննկուն, քաջարի ոգով նետվեց մարտի՝ զոհաբերվելով հանուն մեր մայրերի, քույրերի, եղբայրների, որպեսզի թշնամու պիղծ ձեռքը չհասնի նրանց:

Ես էլ զոհվեցի, մարտը շահելուց հետո իհարկե՝ վիրավոր մարտընկերոջս դաշտից հանելիս...

Կատարեցի իմ առաքելությունը ու ավարտեցի իմ երկրային կյանքը: Ու հիմա հանգիստ եմ, որ ճիշտ ապրեցի: Միայն մի բանի համար եմ ափսոսում. հայրիկիս պատգամը չհասցրեցի կատարել՝ իմ նախնիների բնօրրանը՝ Նախիջեւանի ազատագրումը: Դա էլ ձեզ եմ պատգամում, տղե՛րք:

Ու մի բան էլ, երբեք մի՛ տխրեք, որ ես ձեզ հետ չեմ, հաստատես դու, մամ ջան, քանի որ ես միշտ ձեր կողքին եմ: Մա՛մ ջան, խնդրում եմ, միշտ ժպտա, հպարտությամբ ու բաց ճակատով անուն տուր:

Քո՝ ԴԱՎԹ (ԹԱՐՈՅԱՆ)

Զոհվել է 1994 թ. ապրիլի 19-ին, Հորադիզի շրջանում, 19 տարեկան հասակում:

Դավութօղլուն անհրաժեշտ է համարում «1915-ի հարցում նոր մոտեցում» դրսեւորելը

1-ին էջից

Հուլիսի 10-ին «Ռադիկալում» նշելով այս ամենի մասին, սյունաշարի հեղինակ Ահմեդ Ինսելը գրում է. «Դա անակնկալ չպետք է լինի, որովհետեւ որքան 2015-ը մոտենա, այնքան ակտիվանալու են «ցեղասպանության ճանաչման» նախաձեռնությունները, ինչը գաղտնիք չէ: Խնդիրն այստեղ «ցեղասպանություն» եզրն է, ըստ որի դա բնութագրվում է մարդկության դեմ կատարված հանցագործություն եւ համարվում անվիճելի: Մինչդեռ անվիճելիության հանգամանքը հակասում է ժողովրդավարության սկզբունքներին»:

Հեղինակն այնուհետեւ թուրքական ժխտողականությունը համարում է Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւերի եւ ուրացումը իրականացնող օրինագծերի գլխավոր պատասխանատուն: Նա Հայոց ցեղասպանության հարցում նոր մոտեցում է պահանջում թուրքական պետությունից:

Թեեւ Դավութօղլուն հայտարարել է. «Ես որպես արտգործնախարար չեմ ասում, թե 1915-ին ոչ մի բան չի պատահել, այս հարցում նոր մոտեցում է անհրաժեշտ», սակայն Ինսելը դա համարում է ոչ բավարար, իհարկե, ժխտողականությունը իրականացնող օրինագծերի չեզոքացման համար:

Ի՞նչ է առաջարկում «Ռադիկալի» հեղինակ Ինսելը: Նրա կարծիքով, պետք է լսել հայերին, զգալ եւ ընդունել նրանց վիշտը, «ասածը անմիջապես չխցկել հայերի բերանը» եւ մշակել «վերքերը բուժելու քաղաքականություն», որը ենթադրում է հայկական մշակութային արժեքների պահպանումը, դրանց նոր նպատակներին ծառայեցումը՝ ելնելով օրվա պահանջներից ու թեկուզ Ֆրանսիայի նախաձեռնությամբ մասնագետների համատեղ հանձնաժողովների ստեղծումը:

Վերջում «Ռադիկալի» հեղինակը եզրակացնում է. «Թուրքիայում երկրի նախագահը պետք է ցավ հայտնի 1915-ին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած իրադարձությունների համար, դատապարտի վշտերի պատճառ դարձած քաղաքականությունը եւ ներողություն խնդրի Անատոլիայի հայերի զավակներից եւ թոռներից: Վշտակցությունն ու ներողություն խնդրելն ամենեւին էլ չեն ենթադրում ժխտել պատճառած ցավերի ու սարսափների իրողությունը: Մի՞թե սա չէ պահանջվող այդ նոր մոտեցումը»:

Ինսելը փաստորեն հիմնավորում է Ահմեդ Դավութօղլուի նկրտումը՝ կարծես մատնանշելու, որ Թուրքիայի արտգործնախարարի նոր մոտեցման հիմքում «հայերին վշտակցելու, նրանց ըմբռնումով մոտենալու» քողի տակ 1915-ի իրադարձությունները «ցեղասպանություն» եզրից տարանջատելն է: Իսկ դա ոչ թե նոր մոտեցում կլինի, այլ նոր ձեւակերպումներով թուրքական ժխտողականության հարմարեցումը նոր պայմաններին, որպեսզի հնարավոր լինի կասեցնել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի ծավալումը:

Հետգրություն Ժիրայր Լիպարիտյանի Քաֆու այցելությանը

Լեռնային Ղարաբաղը Քվեբեկ չէ, Ադրբեջանը՝ Կանադա

Aze.az կայքը, որ Իլհամ Ալիեւի աշխատակազմի պատասխանատուներից Էլնուր Ասլանովի՝ Միլլի մեջլիսի փոխխոսնակ Ռիբայաթ Ասլանովայի որդու, անձնական օգտագործման լրատվամիջոցն է, անդրադարձել է իրողությանը, թե ինչպես «հայ քաղաքական գործիչ» Ժիրայր Լիպարիտյանը Բաֆվում գտնվելով, հանդիպել է «ԼՂ ադրբեջանական համայնքի ներկայացուցիչների հետ»: Նախ ասենք, որ պարոն Լիպարիտյանը ԱՄՆ քաղաքացի է, եւ նրա հանդիպումը «ԼՂ ադրբեջանական համայնքի ներկայացուցիչների» հետ պետք է համարել մասնավոր անձի որոշում:

Այժմ՝ ըստ էության: Պարզվում է, «ԼՂ ադրբեջանական համայնքի ներկայացուցիչների» հետ հանդիպմանը Ժիրայր Լիպարիտյանը հարց է բարձրացրել, թե «վերջապես ինչո՞ւ նախագահ Ալիեւը չհանդիպի Բակո Սահակյանի հետ»: Եվ օրինակ է բերել կանադական Քվեբեկը, որի ռեգիոնալ կառավարությունը 1976թ. ի վեր բանակցում է ֆեդերալ իշխանությունների հետ՝ տարածաշրջանի կարգավիճակի հարցով:

Aze.az-ը բերում է մի ամբողջ շարք «հիմնավորումներ, թե ինչու անիմաստ է», որ Իլհամ Ալիեւը հանդիպի Բակո Սահակյանի հետ: Դրանք չափազանց հին են: Մանավանդ այն մասով, որ «ի տարբերություն Քվեբեկի, որը Ֆրանսիայի կողմից չի օկուպացվել, Լեռնային Ղարաբաղում այսօր «տեղաբաշխված են Հայաստանի զորքերը»»: Անանուն հեղինակը հիշեցնում է, որ Քվեբեկի կառավարությունը 1976թ. դիմել է կենտրոնական իշխանություններին՝ բանակցությունների խնդրանքով, մինչդեռ Լեռնային Ղարաբաղում «սեպարատիստները ամեն ինչ սկսել են պատերազմի»:

Հարկ է հիշեցնել, որ 1988թ. փետրվարի 20-ի մարզխորհրդի նստաշրջանը որոշման մեջ տառացիորեն գրված էր՝ «խնդրել», որպեսզի Ադր. ԽՍՀ Գերագույն խորհուրդը ընդունակի ինքնավար մարզը ՀԽՍՀ-ի կազմի մեջ մտցնելու հարցը: Բայց եթե Կանադայի կենտրոնական իշխանությունները Քվեբեկի ռեգիոնալ կառավարության խնդրանքին ընդառաջել եւ հնարավորություն են ստեղծել, որ վերջինս անցկացնի հանրաքվե, ապա Ադրբեջանում ի սկզբանե շրջանառության են դրվել «հողից բաժին չկա» եւ «հողն արյամբ են նվաճում» կարգախոսները:

Որն էր ադրբեջանական կողմի առաջին արձագանքը: Դա փետրվարի 22-ին Բարդայից եւ Աղդամից մի քանի տասնյակ հազարանոց խառնամբոխի արավանքն էր դեպի Ստեփանակերտ՝ «Ղարաբաղի անշնորհակալ հայերին կարգի հրավիրելու»: Իսկ ֆիզ հետո Սումգայիթի եղեռնագործությունը եղավ Ադրբեջանի իշխանությունների «պատասխանը»: Եվ այսպես՝ շարունակ:

Ադրբեջանական կայքը հարցադրումներ է անում եւ պատասխանում: Իհարկե՝ յուրովի: Մեր հերթին հարցնենք. անկախության հարցով հանրաքվե անցկացնելու մասին Քվեբեկի կառավարության հայտարարությունից հետո Կանադայի իշխանությունները երկրի այլ մասերում ապրող ֆրանսախոս բնակչության դեմ հալածանքներ սկսե՞լ են: Ոչ: Օսլավան տնտեսական պատժամիջոցներ կիրառե՞լ է «անջատողականների» դեմ: Ոչ: Կանադայի վարչապետը քվեբեկցիներին «անշնորհակալ հյուր» անվանե՞լ է: Ոչ: Կանադայի կառավարությունը Քվեբեկում Ֆրանսիայի «գործակալներ» փնտրելու անվան տակ անձնագրային ռեժիմի սուգումներ անցկացրե՞լ է: Ոչ: Կանադական մամուլը հեղեղվե՞լ է հակաֆրանսիական նյութերով: Ոչ: Կարելի է անվերջ շարունակել: Բոլոր դեպքերում պատասխանը կլինի «ոչ»:

Միակ բանը, որ արել է Կանադայի վարչապետը, հեռուստատեսային ելույթն է, որի ընթացքում քվեբեկցիներին հորդորել է «դեմ» քվեարկել տարածաշրջանի անկախությանը: Իսկ իրավական առումով կառավարությունը դիմել է երկրի Գերագույն դատարանին, որպեսզի վերջինս տա սեցեսիայի հնարավորության իրավական պատասխանը: Եվ դատարանը, հիմնվելով միջազգային իրավունքի վրա, հստակորեն արձանագրել է, որ ինքնորոշման իրավունքի իրացումը չի հակասում Կանադայի սահմանադրությանը: Այլ բան, որ դատարանի որոշումը ենթադրում է նաեւ սեցեսիայի օրինականացման մի ողջ ընթացակարգ: Գլխավորն այն է, որ Կանադայի Գերագույն դատարանը օրինական է համարել անկախության հարցով հանրաքվե անցկացնելու՝ Քվեբեկի կառավարության որոշումը, եւ հանրաքվեն կայացել է: Առաջին դեպքում քվեբեկցիները կառավարությանը լիազորել են բանակցել կենտրոնական իշխանությունների հետ, երկրորդ անգամ չի հաջողվել հաղթահարել 50 տոկոսի շեմը եւ ռեգիոնը հռչակել անկախ պետություն:

Aze.az-ը փարիսեցիաբար գրում է, որ «Լեռնային Ղարաբաղին ոչ ոք չի զրկել հանրաքվեի իրավունքից»: Սա ակնհայտ կեղծիք է: Ադրբեջանը նույնիսկ չի էլ ընդունել ԼՂ-ում հանրաքվե անցկացնելու հարցը: Ադրբեջանական կայքը դարձյալ բանավիճում է հայ քաղաքագետների հետ, ում արդարացի կարծիքով՝ Ադրբեջանի հանդեպ տարածքային ամբողջականության սկզբունքը կիրառելի չէ, քանի որ այդ պետությունը չի հարգում ինքնորոշման իրավունքը: Սա անառարկելի է: Անկախ Ադրբեջանի ընդունած առաջին «իրավական» ակտերից մեկը Լեռնային Ղարաբաղի ինքնավարության լուծարման մասին սահմանադրական օրենքն էր, որ ընդունվել է ԽՍՀՄ սահմանադրության կոպիտ խախտմամբ: Հենց դա էլ Ադրբեջանի կողմից ինքնորոշման իրավունքը չհարգելու ապացույցն է: Ի տարբերություն Կանադայի, որտեղ Քվեբեկի հաստուկ կարգավիճակը չի լուծարվել, ռեգիոնը չի զրկվել իշխանության սահմանադրական մարմիններից:

Գլխավորը սա է: Մնացածը հետեւանք է: Այդ թվում եւ «զորքերի ներկայությունը», որն, ի դեպ, շատ օրինական է: Քանի որ անկախության ձգտող ժողովուրդը, եթե հանդիպում է խոչընդոտների, մեր դեպքում՝ ռազմական ագրեսիայի, իրավասու է «դիմելու եւ սանձելու արտաքին աջակցություն»: Եթե Կանադայի կենտրոնական իշխանությունները փորձ անեին զենքի ուժով բռնաճնշելու քվեբեկցիների անկախական ձգտումները, եւ ստեղծվեր ճգնաժամային իրավիճակ, ապա բացառված չէ, որ ռեգիոնալ կառավարությունը դիմեր եւ սանձար արտաքին օժանդակություն, այդ թվում եւ ռազմական:

Ի վերջո, aze.az-ը համարում է, որ ««օկուպացիոն զորքերի դուրսբերումից» հետո Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը կարող է ընդունել «իր քաղաքացիներ» Բակո Սահակյանին եւ Բայրամ Սաֆարովին եւ քննարկել երկհամայնքային Լեռնային Ղարաբաղի հետ կապված ամեն մի հարց»: Սա է Ժիրայր Լիպարիտյանի հարցի պատասխանը:

Իրականության մեջ, մինչդեռ, չի եղել, չկա եւ չի լինելու «երկհամայնքային Լեռնային Ղարաբաղ»: Կա Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, որի ազգությամբ ադրբեջանցի քաղաքացիներն Ադրբեջանի իշխանությունների կողմից պահվում են պատանդի կարգավիճակում: Որպեսզի պնդեն «փոխադարձության մեջ փոխադարձության ինքնորոշման իրավունքի» հիմարությունը: Իսկ ԼՂՀ նախագահի հետ Իլհամ Ալիեւի հանդիպում, ըստ ամենայնի, պետք է նախաձեռնի հենց պաշտոնական Բաքուն: Քանի որ խնդիրներ ունի ինքը: Եթե Ադրբեջանում կարծում են, թե պաշտոնական Ստեփանակերտը չափազանց շատ է ցանկանում շփվել Իլհամ Ալիեւի հետ, ապա սխալվում են: Իսկ Ժիրայր Լիպարիտյանը, որպես կիրթ մարդ, ընդամենը հասկացրել է, որ «ԼՂ ադրբեջանական համայնքը» երբեք ԼՂՀ իշխանությունների աուդիենցիային չի արժանանալու:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Երկար նստելու վնասները

Լուիզիանայի պետհամալսարանին կից Կենսաբժշկական հետազոտությունների կենտրոնում կատարված աշխատանքի արդյունքները վկայում են, որ ժամեր շարունակ նստած մնալը կարճացնում է կյանքը եւ հղի է մի շարք լուրջ հիվանդություններով (շաքարախտ, ճարպակալում, ինֆարկտ, ինսուլտ եւ այլն): Այդ մասին հաղորդում է BMJ Open էլեկտրոնային հրատարակությունը:

Գիտնականները հաշվարկել են, որ օրական ամենաշատը երեք ժամ նստելու դեպքում մարդիկ իրենց կյանքը կերկարացնեն երկու տարով, իսկ հեռուստացույց դիտելը երկու ժամի հասցնելով իրենց կյանքին կավելացնեն եւս մեկուկես տարի:

Վիճակագրական տվյալների համաձայն, ամերիկացիներն իրենց ժամանակի 55 տոկոսն անցկացնում են նստած դիրքում: Գիտնականները պնդում են, որ գրեթե անշարժ ապրելակերպի վտանգավորության մակարդակը համեմատելի է ծխելու բացասական հետեւանքի հետ:

ՄՈՍԿՎԱ

Լավրովը սիրիացիներին երկխոսության կոչ արեց

Բուֆերային գոտի Սիրիայի հյուսիսում

Մոսկվայում սիրիական ընդդիմության պատվիրակության հետ հանդիպման ժամանակ ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը բոլոր ընդդիմադիր խմբերին կոչ է արել երկխոսություն սկսել հանուն սիրիացիների ապագայի: «Սիրիական ազգային ծակատի» պատվիրակությունը գլխավորում էր Աբդել Բասեթ Սեյդան:

«Մենք կուզենայինք հասկանալ, թե որքան լայն են կառավարության հետ երկխոսության պլատֆորմի վրա բոլոր ընդդիմադիր ուժերի միավորման հեռանկարները, ինչպես դա նախատեսում է ՄԱԿ-ի ԱԽ-ի հաստատած Կոֆի Անանի ծրագիրը», ընդգծել է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը:

Լավրովը ավելացրել է, որ այդ ծրագիրը նախատեսում է հրադադարի շուտափույթ հաստատում եւ երկխոսության ծավալում: «Դա թույլ կտա տնօրինել երկրի ճակատագիրը, համաձայնեցնել անցումային պրոցեսի պարամետրերն ու ժամկետները», շարունակել է նա:

Ինչ վերաբերում է բուն Սիրիայի վերջին իրադարձություններին, ԱՄՆ հանրային ռադիոն հաղորդում է, որ Սիրիայի հյուսիսում՝ Թուրքիայի սահմանի մոտ ընդդիմությունը ստեղծել է բուֆերային գոտի: Ռադիոկայանի տվյալներով, ապստամբները վերահսկում են Իդլիբի նահանգի մեծ մասը, ինչը նրանց թույլ է տալիս ազատորեն մտնել Թուրքիա եւ վերադառնալ: Ապստամբներից մեկը ռադիոկայանին տված հարցազրույցում ասել է. «Բնականաբար, Թուրքիայի կառավարությունը պաշտոնապես չի հայտարարել բուֆերային գոտու մասին: Մարդիկ ազատորեն զենք են տեղափոխում: Թուրքերը չտեսնելու են տալիս: Այստեղ ենք բերում մեր վիրավորներին: Մեզ ոչ ոք չի խանգարում»:

Պ. Ք.

Կերչի նեղուցը եւ Ազովի ծովը սահմանագծվում են

Ռուսաստանը եւ Ուկրաինան համաձայնության են հանգել Կերչի նեղուցում եւ Ազովի ծովում ջրերի սահմանագծման շուրջը: Երկու երկրների նախագահները երեկ Դրիմում ստորագրել են համապատասխան համաձայնագիր: «Կոմերսանտ-Ուկրաինա» կայքէջը հաղորդում է, որ Կերչի նեղուցում սահմանագծումն իրականացվել է ուկրաինական կողմի ցանկությանը համապատասխան:

Ուկրաինայի տարածքում կմնան մասնավորապես Տուզլա կղզին եւ Կերչ-Ենիկալսկի նավարկելի ջրանցքը: Ռազումկովի անվան տնտեսական եւ քաղաքական հետազոտությունների կենտրոնի փոխտնօրեն Վալերի Չալին, սակայն, պնդում է, թե ուկրաինական կողմը պատրաստ է համաձայնել այդ ջրանցքի համատեղ օգտագործմանը:

Ինչ վերաբերում է Ազովի ծովին, այստեղ ձեռք է բերվել փոխզիջում. սահմանագիծը կանցնի Ուկրաինայի եւ Ռուսաստանի պահանջած սահմանների միջեւ: Համաձայնագրի շրջանակներում ծրագրվում է նաեւ կիսել Սեւ ծովի ծանծաղուտում Պալլասի նավթաբեր մակերեսը, ինչը թույլ կտա իրականացնել նավթի համատեղ արդյունահանում:

Հվ. Կորեայի նախագահի եղբայրը ձերբակալվել է

Հարավային Կորեայի նախագահ Լի Մեն Բակի ավագ եղբայր Լի Սան Դիկը ձերբակալվել է կաշառակերության մեղադրանքով: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ Սեուլի դատարանը ձերբակալությունն իրականացրել է դատախազության պահանջով:

76-ամյա Լի Սան Դիկը կասկածվում է երկու բանկերից կաշառքներ ստանալու մեջ: Մեկը Solomon Savings Banks-ն է, մյուսը՝ Mirae Savings Bank-ը: Կաշառքների դիմաց նա խոստացել է դադարեցնել բանկերի նկատմամբ անցկացվող հետաքննությունները:

Քննության տվյալներով, նախագահի եղբայրը 2007-2011 թթ. ստացել է առնվազն 600 մլն վոն (525 հազար դոլար) կաշառք: Երկու բանկերի աշխատանքը կասեցվել էր միջոցների անբավարարության պատճառով:

2012-ի մայիսին վաստումների համար ձերբակալվել էր Solomon Savings Banks-ի վարչության նախագահ Լիմ Սոկը, որը, քննիչների կարծիքով, կաշառքները փոխանցել էր Լի Սան Դիկին:

Ֆրանսպրեսը հաղորդում է, որ դատարան եկած Լի Սան Դիկի վրա ձվեր են նետել հիշյալ բանկերում իրենց փողերը կորցրած ավանդատուները:

Նախագահի եղբայրը 6 անգամ ընտրվել է հարավկորեական խորհրդարանի պատգամավոր եւ զգալի քաղաքական ազդեցություն ունի երկրում:

Պ. Ք.

Էլդար Շենգելայան փառատոնի պատվավոր հյուր

«Ոսկե ծիրան» երեւանյան 9-րդ միջազգային կինոփառատոնի այս տարվա պատվավոր հյուրերից է վրացական կինոյի ամենակարկառուն դեմքերից մեկը՝ Էլդար Շենգելայան, որի լավագույն «Արտասովոր ցուցահանդես», «Խելառները», «Կապույտ լեռներ կամ անհավանական պատմություն» եւ «Սամանիշվիլու խորթ մայրը» ֆիլմերը ընդգրկվել են փառատոնի «Հետահայաց ցուցադրությունների» ցանկում:

Վրաց կինոյի առաջին վարպետներից մեկի՝ Նիկոլայ Շենգելայայի եւ նշանավոր վրաց դերասանուհի Նատո Վաչնաձեի որդին շատ վաղ տարիքում կարողացել է ցուցադրել իր ռեժիսորական տաղանդը: Նրա ֆիլմերը մարդասիրական են ու առօրյական կյանքով լեցուն: Շենգելայան միշտ կարողանում է պահպանել հանդիսատեսի ժպիտը՝ ծիծաղելին գտնելով նույնիսկ ամենաողբերգականի մեջ, միեւնույն ժամանակ ամենածիծաղելիի մեջ գտնելով ողբերգականը:

Ինչպես եւ ծնողները, Էլդար Շենգելայան մտերիմ բարեկամական հարաբերությունների մեջ էր բազմաթիվ հայ արվեստագետների հետ: Մասնավորապես ուշագրավ էր Սերգեյ Փարաջանովին բանից ազատելու գործում նրա էական մասնակցությունը: «Փարաջանովի թբիլիսյան ձերբակալությունից հետո, պատմում էր «Ոսկե ծիրան» կինոփառատոնի ծրագրերի տնօրեն **Միխայել Սամբոլցյանը** ներկայացնելով Էլդար Շենգելայային, վերջինս մի խումբ ընկերների, այդ թվում Սոֆիկո Ճիաուրելիի հետ հանգիստ չեն թողնում խորհրդային իշխանությունների՝ պահանջելով ազատ արձակել նրան եւ թույլ տալ ֆիլմ նկարել»:

Ի վերջո, դա հաջողվում է եւ Փարաջանովին ազատ են արձակում բանից, իսկ շատ կարճ ժամանակ անց այդ միջամտության արդյունքում եւ աջակցությամբ ստեղծվում է Փարաջանովի «Սուրամի ամրոցի լեգենդը» ու «Աշուղ Ղարիբը» ֆիլմերը: Վրաստանի կինոմատոգրաֆիայի երկարամյա նախագահ Էլդար Շենգալայային հաջողվում է Թիֆլիսում կազմակերպել Փարաջանովի կոլաժների ցուցադրություն՝ անմիջապես բանից դուրս գալուց հետո:

«Ազգի» հարցին՝ հետությամբ հաջողվեց այդ ցուցահանդեսի կազմակերպումը, Շենգելայան ասաց. «Ցուցահանդեսի բացումից երկու օր առաջ իմ աշխատասենյակ մտան երկու անձ եւ ներկայացան որպես ազգային անվտանգության աշխատակից ու զայրացած ասացին, թե ինչո՞ւ առանց իրենց տեղյակ պահելու ենք անում եւ պահանջեցին նախապես ներկայացնել ցուցանմուշները: Ես նրանց ներկայացրեցի Փարաջանովի այն կոլաժը, որտեղ Լենինը պատկերված էր բազմաթիվ լուսանկարներով՝ գլխիվայր, թեք, ընկած եւ այլն: Երբ նրանք տեսան, հիացան ու միանշանակ ասացին, որ ցուցահանդեսը կարող ենք բացել»:

Իսկ թե ի՞նչ կարծիք ունի հայ կինոյի մասին, Շենգելայան ասաց. «Համո Բեկնազարյանի «Շորը եւ Շորշորը» ֆիլմը հրաշալի էր, դա տիպիկ դասական ֆիլմ է, որից ես շատ բան սովորեցի: Ես շատ մտերիմ էի Ֆրունզե Դովլաթյանի հետ ու նրա ֆիլմերը շատ էի հավանում: Ցավոք, նախկինում եղած կապերը, համագործակցությունը հասկանալի պատճառներով դադարել են, բայց կարծես արդեն ձեր այս շատ կարեւոր «Ոսկե ծիրան» փառատոնի շնորհիվ սկսվել է սայլը տեղից շարժվել: Հայկական կինոն այն կինոն է, որտեղ Փարաջանովը զբաղեցնում է իր տեղը ու, իմ կարծիքով, մեծ ներդրում ունի: Ցավոք, այսօր Վրաստանում տարին 2 ֆիլմ է նկարվում եւ դժվար է ասել՝ լա՞վն են, թե՞ վատը: Մի բան էլ է ինձ շատ հուզում, որ ե՛ւ Երեւանում, ե՛ւ Վրաստանում գրեթե չի պահպանվում հինը: Ես շատ տխրում եմ հին Երեւանը հիշելով: Այն տարիների հիշողությունները, ընկերներիս հետ անցկացրած օրերն ու պահերը, ցավոք, այսօր չեմ կարող վերադրել եւ իմ մեջ արթնացնել՝ նոր միջավայրի, շենքերի ու համատարած փոփոխությունների պատճառով»:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

«ԷՐԵԲՈՒՆԻ» ԹԱՆԳԱՐԱՆ

Դեպի հնավայր այցելուների թիվը հետզհետե ավելանում է

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի գործառույթները մյուս թանգարանների գործառույթներից բնականաբար տարբեր են, քանի որ թանգարանը միաժամանակ արգելոց է, ունի ե՛ւ հուշարձանային մաս, ե՛ւ թանգարանային: Մշակութային 2 մասերին առնչվող միջոցառումներին արգելոց-թանգարանը մասնակից է: Անցյալ տարվա գործունեությունից տնօրեն Գագիկ Գյուրջյանն առանձնացրեց Թանգարանային գիշերվա շրջանակում կազմակերպած միջոցառումները:

Թանգարանային գիշերը «Էրեբունի» արգելոց-թանգարան այցելել են 1465 հոգի: Ընդհանրապես, թանգարանի այցելուները շատ չեն, չնայած Գագիկ Գյուրջյանն ասում է՝ նրանց թիվը կամաց-կամաց ավելանում է, վերջերս հատկապես ավելացել են անվճար այցելությունները: Առանձին օրերի թանգարանի մուտքը նույնիսկ լինում է ազատ: Անցյալ տարի այցելուները եղել են շուրջ 15 հազար հոգի: Իհարկե, նրանց թիվը, համեմատությամբ խորհրդային տարիների այցելուների թվի, ավելի փիչ է: Նախկինում «Էրեբունի» այցելում էին անգամ այն բոլոր պետությունների ղեկավարները, որոնք լինում էին Հայաստանում:

Անցյալ տարի թանգարանի կարեւոր քայլերից մեկն էլ եղել է հաշմանդամների համար թեքահարթակի կառուցումը, ինչի շնորհիվ այսուհետեւ այնտեղ առանց խոչընդոտի մտնել կարող են նաեւ հաշմանդամները:

2011-ի ընթացքում թանգարանում հիմնվեց Պատանի հնագետի դպրոցը, որը երիտասարդների ու պատանիների շրջանում լայն արձագանք գտավ: Եվ դպրոցում սովորողները մասնակցեցին Էրեբունիում հայ-ֆրանսիական արշավախմբի աշխատանքներին:

Հնագիտական դպրոցից զատ թանգարանում բացվեց Որմնանկարների վերականգնման դպրոցը, որտեղ դասավանդում են իտալացի մասնագետները: Այստեղ դասընթացները ինչպես տեսական, այնպես էլ գործնական բնույթի են: Ներկայումս դպրոցում սովորում են 17 հոգի, չնայաց դիմորդները գրեթե կրկնակի են եղել: Գագիկ Գյուրջյանը ցանկություն է հայտնում, որ դպրոցի սաները լինեն ավելի շատ, որովհետեւ դիմորդներն իրապես շնորհալի էին: Իսկ Որմնանկարների վերականգնման դպրոցը բացվել է հենց «Էրեբունիում», պայմանավորված հանգամանքով, որ հանրապետության տարածքում հնագույն որմնանկարը հայտնաբերվել է հենց այստեղ:

«Տեսակետ» ակումբում՝ ասուլիսի ժամանակ Գագիկ Գյուրջյանը կատարված ծրագրերից հիշեցրեց եւ հայ-ֆրանսիական արշավախմբի աշխատանքի մասին: Արշավախումբը 2007-2011 թվականներին արգելոց-թանգարանում պեղումներ էր կատարում: Թեեւ անցյալ տարի ավարտվել է այդ ծրագրի ժամկետը, սակայն համաձայնության են եկել նոր ծրագրի շուրջը, սա եւս տեւելու է 4 տարի ու դարձյալ իրականացնելու է հայ-ֆրանսիական արշավախումբը:

Իսկ առաջիկա ծրագրերից առաջնային են արգելոց-թանգարանում կատարված բացահայտումները ցուցադրելը եւ հնավայրի տարածքը ցանկապատելը (հնավայրը զբաղեցնում է շուրջ 27,9 հեկտար): Ըստ պարոն Գյուրջյանի՝ ցանկապատի բացակայությամբ հնարավոր չէ կանխել անարգել այցերը, որոնք կարող են վնաս հասցնել հնավայրին:

Արգելոց-թանգարանին նաեւ անհրաժեշտ է ջեռուցման համակարգ, առ այսօր ջեռուցվում է էլեկտրական սարքերով, որոնք չորացնում են օդը եւ հնարավոր է փչացնեն ցուցանմուշները:

Գագիկ Գյուրջյանը եզրափակելով խնդիրների թեման՝ նշում է, որ խնդիրների հանդեպ վերաբերմունք կա, սակայն դրանք այնպիսի խնդիրներ են, որոնց լուծումը ժամանակ է պահանջում:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Տիտանակի պատարագ՝ կինոյի լեգենդներին

Երեկ Սբ Զորավոր եկեղեցում կատարվեց պատարագ իտալացի անվանի կինոռեժիսոր Միքելանջելո Անտոնիոնիի, իտալացի գրող, սցենարիստ Տոնինո Գուերրայի եւ հույն կինոռեժիսոր, սցենարիստ Թեոդորոս Անգելոպուլոսի հիշատակին: Իսկ երեկոյան «Մոսկվա» կինոթատրոնում կինոյի լեգենդներին նվիրված հուշ-երեկոն սկսվեց մեկ րոպե հոտնկայս լռությամբ: Կինոյի անխոնջ ներկայացուցիչների մասին հնչեցին երախտիքի խոսքեր, ցուցադրվեցին հատվածներ նրանց ֆիլմերից: Կինոյի այս երեք վարպետները հաճախ հանդես են եկել նաեւ համատեղ աշխատանքներով, որոնք համալրել են համաշխարհային կինոյի ոսկե ֆոնդը:

Փառատոն-համերգ Բուենոս Այրեսում

Հուլիսի 7-ին Բուենոս Այրեսում տեղի ունեցավ «Բուենոս Այրեսը տոնում է Հայաստանը» խորագրով բացօթյա փառատոն-համերգ՝ քաղաքի կենտրոնական փողոցներից մեկում տեղակայված բեմահարթակում հանդես եկան Նյու Յորքից հատուկ այդ նպատակով ժամանած ամերիկահայ «Շուշի» պարախումբը, ամերիկահայ երաժիշտներ եւ երգիչներ, ինչպես նաեւ արգենտինահայ համայնքում ճանաչում գտած «Գայանե», «Մասիս» եւ «Նաիրի» համույթները:

Միջոցառման շրջանակներում բացվել էին հայ մշակույթին, պատմությանը եւ խոհանոցին ծանոթացնող մի շարք տաղավարներ:

Համերգին ներկա էին Արգենտինայում ՀՀ դեսպան Վահագն Մելիքյանը, Բուենոս Այրեսի կառավարության համայնքների հետ համագործակցության քարտուղար Կլաուդիո Ավրուխը, արգենտինահայ համայնքային կառույցների ղեկավարներ, տեղական իշխանությունների եւ ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:

Միջոցառումը լայնորեն լուսաբանվեց տեղական լրատվամիջոցների կողմից:

Դասական երաժշտության ընտրանի

Վաստակավոր կոլեկտիվ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբը (գեղեցկ եւ դիրիժոր Էդուարդ Թոփչյան) շարունակում է ամառային համերգաշարը, ներկայացնելով դասական երաժշտության հերթական ընտրանին: Հուլիսի 13-ին ժամը 19-ին երաժշտասերները հնարավորություն կունենան ըմբոշխնելու Կլաուս Բադելթի «Կարիբյան ծովի ծովահենները» ֆիլմի համար գրված երաժշտությունը, Չայկովսկու ռոկոկո թեմայով վարիացիաները, Էդվարդ Միրզոյանի թավջութակի եւ լարային նվագախմբի համար գրած պոեմը, եւ Շոսակովիչի թիվ 1 սիմֆոնիան: Համերգի դիրիժորն է Ավստրիայից հրավիրված ճանաչված երաժիշտ Էռնեստ Հյոցլը, մենակատարը՝ թավջութակահար Աստղիկ Սիրանոսյանը (Ֆրանսիա):

Իտալիայի ֆանդակագործները կրկին կաշխատեն Շուշիում

Հուլիսի 13-ից մեկնարկում է Շուշիի ֆանդակի միջազգային 2-րդ սիմպոզիումը, որի շուրջ երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ զրուցեցին «Հակոբ Գյուրջյանի» անվան ֆանդակի միջազգային սիմպոզիումի նախագահ Վիգեն Ավետիսյանը եւ Ֆլորենցիայի գեղարվեստի ակադեմիայի պրոֆեսոր **Ջուզեպպե Դել Դեբիոն**:

Սիմպոզիումն անցկացվում է արդեն երկրորդ տարին, որին ինչպես անցյալ տարի մասնակցում են իտալացիները, բանախոսներից ֆանդակի միջազգային սիմպոզիումի նախագահն իր հերթին նշեց.

«Իրենց ստեղծագործություններով նրանք շատ եւ շատ հարցերի պատասխաններն են տալիս, որոնք Արցախի համար կարեւոր են: Արցախի ճանաչման հարցը պետք է լուծվեր դեռեւս 10-15 տարի առաջ, եւ մենք պետք է ավելացնենք աջակիցների թիվը, քանի դեռ պատերազմական իրավիճակի մեջ ենք գտնվում, եւ պետք է այնպես անենք, որ հայ ժողովուրդը նոր տառապանքներ չկրի»: Բանախոսը կարեւորում է Շուշիի վերականգնման գործընթացի պլանները, որոնք իտալացիներն իրենց հետ բերել են: Հատկանշական է, որ այս տարի եւս սիմպոզիումը կնկարահանվի, եւ կստեղծվի ֆիլմ, որը կտարածվի նաեւ Ֆլորենցիայում: Սիմպոզիումի շրջանակում տեղի կունենան վարպետության դասեր, դիզայնի դասընթացներ, կինոդիտումներ:

Անդրադառնալով ադրբեջանական կողմից հնչած սպառնալիքներին, Վ. Ավետիսյանն ասաց, որ դրանք չեն հուզում, ո՛չ հայկական, ո՛չ էլ արտերկրի հյուրերին, իսկ Ֆլորենցիայի գեղարվեստի ակադեմիայի Պրոֆեսոր Ջուզեպպե Դել Դեբիոն էլ իր հերթին հավելեց. «Ադրբեջանը պետք է հասկանա, որ աշխատում ենք խաղաղության համար, պետք չէ պատերազմել, քանի որ դրանից տուժում է նախ եւ առաջ խաղաղ բնակչությունը»:

Պրոֆեսորը կիսելով տպավորությունները ասաց, որ շատ ուրախ է Հայաստանում գտնվելու կապակցությամբ, քանի որ ինչպես բանախոսը նշեց, հայերը հյուրընկալ ժողովուրդ են, եւ եթե երիտասարդ լիներ, ապա ավելի հաճախ կգար: Պրոֆեսոր Ջուզեպպե Դել Դեբիոնի ցանկությունն է, որ սիմպոզիումը շարունակական բնույթ կրի, եւ այսուհետ Լուկան եւ Շուշին լինեն ֆույր քաղաքներ:

Ոգեշնչված Արցախի բնությամբ՝ պրոֆեսորներից «Մեկը պատրաստել է մի ֆանդակ՝ «Մարդը հավաքում է արեւի ոսկիները» թեմայով: Իսկ պրոֆեսոր Դել Դեբիոյին էլ զարմացրել են Շուշիի եկեղեցիները, եկեղեցական երգերը: Ի դեպ Դել Դեբիոյն այս տարի կերտելու է հրեշտակ՝ ձեռքում նուռ:

ՄԱՆՈՒԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Բումեյֆերներն էլ հավատում են «Շիրակի» եւ «Գանձասարի» հաջողությանը

Այսօր հայկական ֆուտբոլային 3 ակումբները՝ «Փյունիկը», «Շիրակն» ու «Գանձասարը» Եվրոպայի լիգայի մրցաշարի որակավորման առաջին փուլի պատասխան հանդիպումները կանցկացնեն: Նշված եռյակից առաջին խաղում իրեն հիանալի դրսեւորեց միայն «Շիրակը», որը հյուրընկալվելիս 1-0 հաշվով հաղթեց Չեռնոգորիայի «Ռուդարին»: Իսկ ահա մեր մյուս 2 ակումբները պարզապես հիասթափեցրին: Խոսքը հատկապես Կապանի «Գանձասարի» մասին է, որը հյուրընկալվելիս 1-3 հաշվով խայտառակ պարտություն կրեց թույլ մրցակցից՝ Ֆարերների «Ստրեյմուրից»: «Փյունիկն» էլ սեփական հարկի տակ 0-3 հաշվով զիջեց Չեռնոգորիայի «Զետային»:

Ինչ խոսք, հաջորդ փուլ դուրս գալու ամենալավ հնարավորությունն ունի Գյումրիի «Շիրակը»: Գյումրեցիները եվրոգավաթներում 10-րդ անգամ են մեկնարկի դուրս գալիս եւ առայժմ նրանց չի հաջողվել հաղթահարել առաջին փուլի արգելքը: Մրցակցի հարկի տակ տոնած հաղթանակը մեծ հույսեր է ներշնչում, որ «Շիրակը» սեփական դաշտում էլ հաջողության կհասնի ու հաջորդ փուլի ուղեգիր կնվաճի: «Ռուդարի» հետ հանդիպումը կսկսվի ժամը 18-ին եւ ուղիղ եթերում կցուցադրվի Հանրային հեռուստատեսությամբ: Հանդիպման նկատմամբ հետաքրքրությունը Գյումրիում անչափ մեծ է, իսկ վերակառուցված քաղաքային մարզադաշտը մոտ 3000 հանդիսական կարող է տեղավորել: Ուստի մուտքը մարզադաշտ կլինի տոմսերով: Արեւմտյան տրիբունայի տոմսերն արժեն 1000 դրամ, արեւելյանը՝ 500 դրամ:

«Ռուդարը» Բելգրադ-Մոսկվա-Երեւան ուղերթով երեկ առավոտյան է ժամանել «Զվարթնոց» օդանավակայան, որտեղից ավտոբուսով մեկնել է Գյումրի՝ հանգրվանելով «Արաֆ» հյուրանոցում: Երեկ երեկոյան «Ռուդարը» մարզվել է Գյումրու քաղաքային մարզադաշտում:

Այսօրվա խաղում «Շիրակի» հաջողությանը հավատում են նաեւ բումեյֆերները: «Շիրակի» հաղթանակը գնահատվել է 2 գործակցով, ոչ-ոքին՝ 3,1, իսկ հյուրերի հաղթանակի համար խաղադրույքներ են ընդունվում 3,6 գործակցով:

Թեեւ առաջին խաղում կրած պարտությանը, «Ռուդարի» ֆուտբոլիստներն ակումբի պաշտոնական կայքում հայտարարել են, որ դեռեւս ոչինչ կորցված չէ, Գյումրիում բոլոր ջանքերը կներդնեն հաղթելու եւ ուղեգիր նվաճելու համար: «Շիրակի» գլխավոր մարզիչ Վարդան Բիչախչյանն էլ նշել է, որ այսօր եւս համառ մրցակցություն է սպասվում: «Շիրակը» կրկին խաղալու է հարձակողական ոճով, միեւնույն ժամանակ շատ զգոն է գործելու պաշտպանությունում: Հուսանք, որ «Շիրակի» համար ամեն ինչ բարեհաջող կավարտվի եւ թիմը հաջորդ փուլի ուղեգիր կնվաճի:

Կարծում ենք, որ «Գանձասարն» էլ պետք է հաջորդ փուլ դուրս գա: Դրա համար կապանցիներին անհրաժեշտ է այսօր «Հանրապետականում» կայանալիք խաղում «Ստրեյմուրին» հաղթել 2 գնդակի տարբերությամբ: Հաշվի առնելով թիմերի խաղամակարդակների տարբերությունը, այդ խնդիրը լիովին լուծելի է «Գանձասարի» համար: Մնում է, որ թիմն առաջին րոպեներից մեծ ուժերով ճնշում գործադրի մրցակցի դարպասին՝ չմոռանալով իհարկե սեփական դարպասի պաշտպանության մասին:

«Գանձասար»-«Ստրեյմուր» հանդիպումը կսկսվի ժամը 19-ին եւ ուղիղ եթերում կցուցադրվի «Շողակաթ» հեռուստաալիքով: Այս խաղում էլ բումեյֆերները նախապատվությունը տալիս են հայկական թիմին, որի հաղթանակի գործակիցը 1,6 է: Իսկ ահա հյուրերի հաղթանակը գնահատվում է 5 գործակցով: Ոչ-ոքիի գործակիցը 3,6 է:

«Գանձասարի» գլխավոր մարզիչ **Սամվել Սարգսյանը** եւս լավատես է: Նա գտնում է, որ մրցակցի պաշտպանությունը խոցելի տեղեր ունի եւ մեծ ուժերով հարձակվելու դեպքում կարելի է գրավել «Ստրեյմուրի» դարպասն ու հաջողությամբ լուծել թիմի առջեւ դրված խնդիրը:

Ինչ վերաբերում է «Փյունիկին», ապա պատասխան խաղում ՀՀ բազմակի չեմպիոնի խնդիրը շատ բարդ է: Համարյա պատանի ֆուտբոլիստներով կազմավորված «Փյունիկը» գործնականում կորցրել է հաջորդ փուլ դուրս գալու բոլոր հնարավորությունները: Եվ ինչպես նշել է թիմի գլխավոր մարզիչ **Սուրեն Չախալյանը**, պատասխան խաղում փյունիկցիները կձգտեն գոնե արժանապատիվ ելույթ ունենալ: Թե որքանով դա կհաջողվի, ցույց կտա այսօրվա հանդիպումը:

Բնականաբար, «Փյունիկի» հաջողությանը չեն հավատում նաեւ բումեյֆերները՝ հաղթանակը գնահատելով 4,4 գործակցով: Մինչդեռ «Զետայի» հաղթանակի գործակիցը 1,7 է, իսկ ոչ-ոքին գնահատվել է 3,5-ով:

Հայտնի են ՌԴ հավաքականի գլխավոր մարզչի 13 թեկնածուները

Ռուսաստանի ֆուտբոլային միությունը հրապարակել է ազգային հավաքականի գլխավոր մարզչի 13 թեկնածուների ցանկը, որում ընդգրկված են ինչպես օտարերկրացի, այնպես էլ տեղացի մարզիչներ: Օտարերկրացիներից նշված են Ռաֆայել Բենիտեսը, Մարսելո Բիելսան, Խոսեպ Գվարդիոլան, Ֆաբիո Կապելոն, Մարչելո Լիպին եւ Գարի Ռեդնապը: Ռուսաստանցի մասնագետներից գլխավոր մարզչի պաշտոնին հավակնում են Անատոլի Բիշովեցը, Վալերի Գազաեւը, Անդրեյ Կոբելեւը, Յուրի Կրասնոժանը, Վալերի Նեպոմնյաշչին, Նիկոլայ Պիսարեւն ու Յուրի Սյոմինը:

Ներկայումս «Ալանիայի» նախագահ Վալերի Գազաեւն իսկական կրկես է անվանել նման ցուցակի հրապարակումը, գտնելով, որ ողջ Եվրոպան այդ ցանկի առիթով պարզապես կծիծաղի Ռուսաստանի ֆուտբոլային միության վրա: Իսկ ահա Կիեւի «Դինամոն» գլխավորող Յուրի Սյոմինը նշել է, որ ցուցակում ընդգրկելիս իր հետ ոչ մեկը չի խորհրդակցել: Վալերի Նեպոմնյաշչին էլ լավ կատակ է անվանել ցուցակի հրապարակումը:

Ցուցակում իրենց հայտնվելը տարբեր կերպ են մեկնաբանել օտարերկրացի մարզիչները: Ֆաբիո Կապելոյի որդին՝ Պիերֆիլիպոն, որ նաեւ հոր գործակալն է, հետեւյալն է նշել. «Թեեւ դեռեւս Կապելոյի հետ չեմ խորհրդակցել, սակայն գիտեմ, որ նա շահագրգռված է գլխավորելու ՌԴ ազգային հավաքականը: Այն իր սիրելի հավաքականներից է եւ շատ ուժեղ է: Կապելոն պատրաստ է բանակցելու ՌՖՄ-ի ներկայացուցիչների հետ»:

ՌՖՄ-ի հետ բանակցելուն պատրաստ է նաեւ Գարի Ռեդնապը՝ անգլիական «Տոտենհեմի» նախկին գլխավոր մարզիչը: Իսկ ահա Ռաֆայել Բենիտեսի գործակալը հայտարարել է, որ քանի դեռ ՌՖՄ-ն պաշտոնական առաջարկ չի կատարել, իմաստ չկա խոսելու:

Մարադոնան պաշտոնանկ արվեց

Արաբական Միացյալ Էմիրությունների «Ալ Վասլ» ակումբի ղեկավարությունը պաշտոնանկ է արել թիմի գլխավոր մարզիչ Դիեգո Մարադոնային: Պատճառը թիմի թույլ մրցելույթներն են: «Ալ Վասլը» 12 թիմերի մրցավեճում երկրի առաջնությունում գրավել էր 8-րդ տեղը՝ նախորդ մրցաշրջանի համեմատ նահանջելով 2 հորիզոնականով:

Դիեգո Մարադոնան ակումբի հետ երկամյա պայմանագիր էր կնքել 2011-ի մայիսին: Ըստ որոշ աղբյուրների, Մարադոնայի հարաբերություններն ակումբի ղեկավարության հետ սրվել էին, քանի որ վերջինս թիմ չէր հրավիրել մարզչի ընտրած ֆուտբոլիստներին:

Ժամանակին Մարադոնան մարզչական գործունեություն է ծավալել Արգենտինայում՝ մարզելով տեղական 2 ակումբ, ինչպես նաեւ երկրի ազգային հավաքականը:

ՇԱԽՄԱՏ

Գաբրիել Սարգսյանն անկասելի է

Հունաստանի Ռեթիմնո քաղաքում ընթացող շախմատի մրցաշարում պարզապես գերազանց է հանդես գալիս օլիմպիական չեմպիոն Գաբրիել Սարգսյանը: Առայժմ նրա հաղթարշավը ոչ մեկին չի հաջողվում կասեցնել: 5-րդ տուրում Գաբրիելը նոր հաջողության հասավ իր հետ աղյուսակը գլխավորող ուկրաինացի գրոսմայստեր Յուրի Կրիվոռուչկոյի հետ մրցավեճում: 5 տուրից հետո հայրուր տոկոսանոց արդյունքով Գաբրիելը միանձնյա գլխավորեց աղյուսակը:

Հայ շախմատիստից կեսապես միավորով հետ են մնում հնդիկ Սունդար Շյամը եւ ռուսաստանցի Անդրեյ Ռիչագովը: Հենց վերջինիս հետ էլ Սարգսյանը 6-րդ տուրում կմրցի սեւ խաղաքարերով:

Հաջող է հանդես գալիս նաեւ Տիգրան Մամիկոնյանը, որը սպիտակներով հաղթելով Նիկիտա Սմագինին, վաստակեց 3,5 միավոր:

Արագ շախմատում ուժեղագույնը Գրիշչուկն է

Աստանայում ավարտվեց շախմատի կայծակնային խաղի աշխարհի առաջնությունը, որի պարգեւները վիճարկեցին 16 շախմատիստներ: Չեմպիոնը որոշվեց 2 շրջանով անցկացված մրցաշարում: 30 հնարավորից վաստակելով 20 միավոր, աշխարհի չեմպիոն հռչակվեց ռուսաստանցի Ալեքսանդր Գրիշչուկը: Նրան ընդամենը կես միավոր զիջեց նորվեգացի Մագնուս Կառլսենը: 18,5 միավորով բրոնզե մեդալակիր դարձավ ռուսաստանցի Սերգեյ Կարյակինը, որը մի քանի օր առաջ Աստանայում նվաճել էր արագ շախմատի աշխարհի չեմպիոնի տիտղոսը:

Հենրիխ Մխիթարյանն Ուկրաինայի սուպերգավաթակիր

Հայաստանի ազգային հավաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը Դոնեցկի «Շախտյորի» կազմում առաջին անգամ դարձավ Ուկրաինայի սուպերգավաթակիր: Պատվավոր մրցանակի համար պայքարում «Շախտյորը» Լուգանսկում 2-0 հաշվով հաղթեց Դոնեցկի «Մետալուրգին»: Թիմին հաղթանակ պարգեւեցին Ադրիանոյի եւ Կոստայի խփած գոլերը:

Հենրիխ Մխիթարյանը մասնակցեց ողջ հանդիպմանը: 90 րոպե խաղադաշտում էր նաեւ Գեւորգ Ղազարյանը, որը «Մետալուրգում» այս խաղում կատարում էր կենտրոնական հարձակվողի պարտականությունները: Արտակ Եդիգարյանը հայտավորված էր խաղին, բայց այդպես էլ խաղադաշտ դուրս չեկավ: «Մետալուրգի» 3-րդ հայ ֆուտբոլիստը՝ Կառլեն Մկրտչյանը քթի վիրահատությունից հետո առայժմ աղաքինվում է:

Այսպիսով, Հենրիխ Մխիթարյանը «Շախտյորում» նվաճեց Ուկրաինայի բոլոր հնարավոր տիտղոսները: Նա նաեւ Ուկրաինայի կրկնակի չեմպիոն ու գավաթակիր է:

Ադվոկատը ռուսներից 300 հազար եվրո է պահանջում

Ֆուտբոլի ՌԴ հավաքականի նախկին գլխավոր մարզիչ Դիկ Ադվոկատը, որի պայմանագրի ժամկետը Ռուսաստանի ֆուտբոլային միության հետ ավարտվում է միայն հուլիսի 15-ին, պահանջում է իր վերջին ամսվա աշխատավարձը, որը մոտ 300 հազար եվրո է:

Այս առնչությամբ Ռուսաստանի ֆուտբոլային միության նախագահի պաշտոնակատար Նիկիտա Սիմոնյանը հետեւյալն է նշել. «Իրոք կարող եմ հաստատել, որ Ադվոկատի հետ պայմանագրի ժամկետը լրանում է հուլիսի 15-ին: Սակայն «Էյնդհովենի» հետ պայմանագիր կնքելով, Ադվոկատը փաստորեն խախտել է մեզ հետ ունեցած պայմանավորվածությունը: Առայժմ դժվարանում եմ ասել, թե ինչ քայլեր կձեռնարկենք: Սակայն ինձ ավելի շատ մտահոգում է հարցի բրոֆեսիոնալ կողմը: Մենք Ադվոկատին հրավիրել էինք ՌՖՄ՝ լսելու նրա հաշվետվությունը Եվրո-2012-ում հավաքականի ելույթների վերաբերյալ, սակայն նա մինչ օրս չի ներկայացել: Մի՞թե սա պայմանագրի խախտում չէ»:

Հիշեցնենք, որ Եվրո-2012-ում հույներին պարտվելուց հետո Ադվոկատը մեկնել էր հայրենիք: Մի քանի օր անց նա հայտարարել էր, որ իրեն չի հետաքրքրում, թե Ռուսաստանում իր մասին ինչպիսի կարծիք են: Իսկ հուլիսի 1-ին նա արդեն առաջին մարզումն էր անցկացրել «Էյնդհովենում»:

Նշենք, որ հոլանդացի մեկ այլ մարզչի՝ Գուս Հիդինգի հետ էլ ժամանակին նման իրավիճակ էր ստեղծվել: Նրա պայմանագրի ժամկետը մինչեւ 2010-ի մայիսն էր: Սակայն ՌԴ հավաքականը չկարողացավ աշխարհի առաջնության ուղեգիր նվաճել՝ նոյեմբերին անցումային խաղերում զիջելով Սլովենիայի ընտրանուն: Մինչեւ մայիս ՌԴ հավաքականը միայն մեկ ընկերական հանդիպում անցկացրեց՝ ոչ-ոքի խաղալով հունգարացիների հետ: Փաստորեն, անգործության մատնված կես տարվա համար ՌՖՄ-ն ստիպված էր Հիդինգին մոտ 4 մլն եվրո վճարել:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հետքերով

Ոսկյա հոբելյան մայր հայրենիքում

Հայրենիքո՞ւմ է դժվար լավ հայ մնալը, թե՞ սփյուռքում: Թվում է անիմաստ հարց, սակայն մեզանում այս օրերին այնքիսի անհասկանալի ու տարօրինակ բաներ են կատարվում, որ հարցն այնքան էլ հիմնազուրկ չէ: Առհավատչյան՝ այն արբավը, որ տարածվել է մեզանում: Սկսենք նրանից, որ մենք այնքան ենք «սիրում ու պաշտում» եվրոպական արժեքները, որ առանց որեւէ գիտական, աշխարհագրական կամ այլ հիմնավորման մենք մեզ հայտարարեցինք եվրոպացիներ (թեեւ երբ առիթ է ներկայանում, նրանց բոլորին գամում ենք անարգանքի սյունին): Հեռուստատեսությամբ ու ինֆորմացիայի այլ միջոցներով ամեն օր քարոզում ենք զուտ կինոֆիլմերից մեզ ծանոթ «ամերիկյան» բռնություն, սպանություններ, կողոպուտ, թալան, հեքիաթանման որդե ու ծնողահայտնագործություններ, «ազատ» սեր ու սեքս եւ էլի չգիտեմ ինչ: Կարծում եմ, որ հեռու չէ այն օրը, երբ մենք մեզ կհայտարարենք... ամերիկացիներ: Իսկ այդ դեպքում, ինչպես եղել ու լինում է մեզանում, մենք մրցակիցներ դժվար թե ունենանք:

Այս մտահոգիչ նախաբանը թերեւս սվերվում է, երբ վերադառնում եմ օրերս տեղի ունեցած առաջին հայացքից աննշան, բայց իրականում մեծարժեք ու հատկապես ուսանելի շատ կողմեր ունեցող մի իրադարձություն, որն ունի իր նախապատմությունը: 2011 թ. մի օր, օգոստոսին, արձակուրդի ժամանակ, **Անահիտ** եւ **Բաբկեն Մկրյաններն** իրենց երեք զավակների եւ նրանց ընտանիքների հետ ճաշում էին: Հանկարծ մեծ տղան անսպասելիորեն հարցրեց, թե հայրիկ եւ մայրիկ, եկող տարի ձեր ամուսնության 50-ամյա հոբելյանն է, այսինքն՝ Ոսկե հարսանիքը, որտե՞ղ ենք նշելու:

- Մենք ասացինք, որ կփափագենք բոլորով գոնե մեկ շաբաթով միասին տեղ մը երթանք: Իսկ թե ո՞ւր, ձեր որոշումը պիտի ըլլայ: Իսկ հաջորդ երեկոյան,- հիշում են Բաբկեն եւ Անահիտ Մկրյանները,- մեծ տղաս ըսավ, որ մենք բոլորով որոշում առնք, որ երկուքդ ալ պիտի սիրեք, որ բոլորս միասին երթանք Հայաստան եւ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնին մեջ նշենք Ձեր ոսկյա հոբելյանը»:

- Ուրախության արցունքները սահեցան, եւ բոլորը միասին ըսին՝ մաման սիրեց մեր որոշումը,- ոգեւորված պատմում է մեծ որդին:

Իսկ այդ պահին փոքրիկ էր Բաբկենի ու Անահիտի հոգիներում: Նրանք մի պահ վերադարձան անցած դժվարին օրերը եւ վարձատրված լինելու յուրահատուկ ու մեծ զգացում առրեցին: Ուրեմն իզուր չեն աղրել, հայեր են մեծացրել, հայ են մնացել: Ամենագրավիչը թերեւս այն էր, որ դա լիարժեք վերաբերում էր նաեւ իտալուհի հարսներին, որոնք պակաս չէին հուզվել եւ... երջանիկ էին:

Հոբելյարների ուրախությունը եռապատկվեց, երբ Նյու Յորք այցելած ժամանակ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ Վեհափառը, իմանալով մոտալուտ հոբելյանի մասին, ցանկություն հայտնեց անձամբ իջնել եւ իր օրհնությունը տալ վաստակաշատ զույգին:

- Մեր երկուքին ուրախության եւ զգացվածության արցունքները հոսեցան,- հիշում է տիկին Անահիտը,- եւ դիմելով ըսի՝ բայց, Վեհափառ Տեր, այդ մեզ համար մեծ պատիվ է: Արդյո՞ք մենք արժանի ենք...

Մայր աթոռ Ս. Էջմիածնում Վեհափառի մասնակցությամբ տեղի ունեցավ օրհնություն եւ փառահեղ ընդունելություն: Բոլորն հուզված էին, իսկ զույգը մի տեսակ շփոթված էր, մանկացած: Տարիների վաստակը նրանց չէր փոխել: Նրանք շիկնում էին, խոնարհում աչքերը, ամոթխած հիշում իրենց պսակի առաջին արարողությունը, որից հետո այնքան ջրեր էին հոսել, սակայն իրենք նույնն էին, թեեւ առայժմ երկխաղաքացու կարգավիճակում, սակայն հետո ՀՀ լիիրավ քաղաքացի դառնալու վստահ որոշմամբ: Իսկ հաջորդ օրը մեր քաղաքի շքեղաշուք «Ֆլորենս» նորակառույց ռեստորանում մեծ խնջույք էր, որին մասնակցում էին ու ելույթներ ունեցան շատ նշանավոր անձինք: Նրանք, շնորհավորելով հոբելյարներին, մեկ առ մեկ թվարկում էին զույգի կատարած հայանպաստ մեծ աշխատանքը, շեշտում հայապահպանության գործում նրանց զգալի ներդրումը:

Ես ակնդետ հետեւում էի այդ ամենին եւ նայելով նրանց աչքերին՝ հասկանում էի, որ տեր եւ տիկին Մկրյանների համար ամենամեծ նվերն ու մեծարանքը թերեւս այն էր, որ իրենց շրջապատողները՝ հայաստանցի թե սփյուռքահայ, ամերիկացի թե իտալացի, նախ եւ առաջ իրենց էությամբ լավ մարդիկ են ու անպայման ինչ որ չափով հայեր, որոնց կարելի է վստահել, որոնց վրա հենվելով կարելի է ապագայում շատ մեծ ու հայանպաստ գործեր կատարել: Իսկապես, պարտադիր չէ կրծքով հրակնաց փակել հերոսանալու համար: Պակաս հերոսություն է ամենակուլ ամերիկյան արժեհամակարգում ազգային կերպարում մնալը, հայանպաստ հոգեկերտվածքով հայ մեծացնելը, հայրենիքի ինքնագիտակցության պաշտամունքով ու անպայման հաստատման պահանջով աշխարհի անիրավներին մարտահրավեր նետելը:

Ուրեմն շարունակեք Ձեր վաստակած երջանկությունը վայելել, հարգարժան Մկրյաններ, Ձեր ուսանելի օրինակը թող վարակիչ դառնա, նպաստի մեր լուսավոր ապագան ավելի հստակ դարձնելու վեհ գործին:

ՍՈՒՐԵՆ Թ. ՄԱՐԳՍՅԱՆ

Հողատարածքներ եւ այգիներ Կոտայքի մարզում

Կոտայքի մարզի Հացավան գյուղում վաճառվում են լավ մշակված ծիրանի 2 այգիներ՝ 9.500 և 15.000 քմ, ինչպես նաև դաստակ հողատարածքներ՝ 10000քմ, 15000քմ, 20000 և 30000 քմ՝ առանց միջնորդի, մաքրելի գնով, շուկայականից էժան: Բերքը վաճառվում է միասին, շատ: Ծառերը 5 տարեկան են:

Հեռ. 099-51-61-83, 055-26-47-83, 077-26-47-83:

ԻՆՉՊԻ՞ ՀԱՄԱՐ ԵՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ

Դարձյալ հեռուստաթերի մասին

Հեռուստատեսությունը ծրագիր, սերիալ կամ որեւէ հեռուստաարտադրանք նկարահանելուց առաջ նախ եւ առաջ իր առջեւ պետք է խնդիր դնի, թե ինչո՞ւ է դա թողարկում: Իսկ քանի չկա հարցի պատասխանը, արդեն «հեռուստաթերը պետք է մարել» արտահայտությունը, որը տարիներ շարունակ հնչում է անհետեւանք, այդպես անհետեւանք էլ կմնա:

Երեկ «Տեսակետ» ակումբի բանախոսները՝ ժողովրդական արտիստ **Երվանդ Մանարյանն ու Անդրանիկ սարկավագ Մանուկյանը** ասում էին վերոնշյալը՝ հեռուստատեսությունը, իսկապես, պետք է խնդիր դնի՝ ինչի՞ համար է նկարում ու հեռարձակում իր արտադրանքը:

Երվանդ Մանարյանը կարծում է, որ հեռուստաթերի առջեւ ընդհանրապես դրված է սերունդ դաստիարակելու խնդիրը, իսկ ազատ ձեռներեցություն ասվածը չի նշանակում, թե ով ինչ ուզում է՝ կարող է անել: Սակայն մեր հեռուստաթերը, ըստ Ե. Մանարյանի, գրեթե 2-րդ իրավիճակում է: «Ինչու եմ ասում գրեթե, որովհետեւ խելացի մոտեցումներ նույնպես կան», ավելացնում է պարոն Մանարյանը

Իսկ Անդրանիկ սարկավագ Մանուկյանը նշում է՝ եթե խոսում ենք սերունդ դաստիարակելուց, ապա մեր արմատներին պետք է նայենք: Եվ հեռուստաարտադրանքը համապատասխան մասնագետները, օրինակ՝ լեզվաբանները, պետք է ստուգեն, հետո նոր հեռարձակեն:

Հեռուստաթերի մակարդակը բարձրացնելու նպատակով հանձնաժողով ստեղծելուն պարոն Մանարյանը չի նայում որպես հարցի լուծման, այլ կարծում է, որ հեռուստահաղորդում կամ սերիալ նկարահանողն առաջին հերթին պետք է լինի ազնիվ ու պատասխանատվությամբ վերաբերվի նպատակին, որն էլ իր առջեւ պետք է դնի հեռուստատեսությունը: Իսկ սերիալներում խաղացող երիտասարդ դերասանները, ըստ նրա, գրեթե բոլորն էլ շնորհալի են, սակայն խնդիրն այն է, թե ինչ են նրանք մատուցում մեզ:

Անդրանիկ սարկավագը նույնպես նշում է, որ հեռուստատեսությամբ դաստիարակչական ծրագրեր ցուցադրվում են, այնպես չէ, որ նման ծրագրերն ամբողջովին բացակայում են, սակայն դրանց թիվը սակավ է:

Ի. Պ.

Կորել է

Հարություն Շարոյանի արտարժույթի առուվաճառքի մասնագիտական որակավորման վկայականը՝ տրված ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

Համարել անվավեր:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ցանցային սարքավորումներ ձեռքբերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար բաց ընթացակարգ կազմակերպելու մասին

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց ընթացակարգ՝ ՀՀ կենտրոնական բանկի կարիքներն ապահովվելու նպատակով ցանցային սարքավորումներ ձեռքբերելու նպատակով մատակարար կազմակերպություն ընտրելու համար:

Բաց ընթացակարգին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Բաց ընթացակարգին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2012թ. օգոստոսի 20-ի ժամը 16:00-ն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2012թ. Օգոստոսի 20-ին ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2012թ. օգոստոսի 24-ին ժամը 16-00-ին:

Բաց ընթացակարգում հաղթողը որոշվելու է՝

1) այն մասնակցին ընտրելու միջոցով, որի առաջարկած գնին եւ ոչ գնային չափանիշներին տրված գնահատականների հանրագումարը ամենաբարձր է:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (**www.cba.am**): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գործերի կառավարչություն, հեռ. 59-28-02, 59-28-05 ներքին՝ 18-02, 18-05:

Բաց ընթացակարգին մասնակցելու հրավերի թղթային տարբերակը ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Սույն հայտարարության մեջ նշված բաց ընթացակարգի հետ կապված բողոքները կարող են ներկայացնել գնումների բողոքարկման խորհուրդ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

ՀՀ ԿԲ Հասարակայնության հետ կապերի ծառայություն

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 11.7.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: